№ 166 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

№ 166 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ելիզաւետինսկայա, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի. (ա.օ.) առ. 4—6

ՇՈՒՇՈՒ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ

ներկայ ուսումնական տարվայ համար անհրաժեշտ են բարձր կրթութեան տէր տեսուչ և ուսուցիչներ։ Ցանկացողներին խնդրում են այսմանների մասին դիմել հեռագրով գպրոցի հոգաբարձութեանը։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պանդխտութեան առաջ. Վերջին տեղեկութիւններ։ Դրութիւնը Զիւանշիրում. Ֆինլանդիայում. Նպաստամատոյց յանձնաժողովի նիստը. Ընտրութիւնների շուրջը. Pepetuum tobile. Անանուն տիրը. Մայրաքաղաքի կնանքից. Ցունխպ 7-ի կօնդակը. Մահմեդական-հայ հարցի մասին խորհրդակցութիւնն Պետական Դումայում. Կենտրօնական ժողովին. Նամակ Նիժնի-Նովգորօդից. Մանրի մնդական և բուժական նշանակութիւնը. Նամակ խմբագրութեան. Նեբքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

I

Մենք յայտնել էինք, որ մեր գաւառներից երիտասարդ ոյժեր սկսել են նորից դիմել պանդխտութեան։

Գիւղի աւերված լինելու և արտերի առանց ցանքի մնալու պատճառով գիւղացի երիտասարդները շտապում են քարաքներ ապրուստի միջոց ճարելու։ Սակայն նրանց հեռանալով գիւղը զրկվում է իր պաշտպան ոյժերից և նուազեցնում է դիմադրելու ընդունակութիւնը։

Պանդուխտներ, կանգ առէք։ Եթէ այսօր դուք հեռանում էք, այդ միևնոյնն է, թէ ձեզ հետ ամբողջ գիւղն էք տանում, որովհետև անպաշտպան մնացած գիւղը ստիպված էը լինի շուտով ինքն էլ թողնել հեռանալ դէպի աւելի ապահով տեղ։

Կը գան աւելի հանդիստ և ապահով օրեր, այն ժամանակ ձեր հեռանալը չի ունենայ վանդաւոր հետևանքներ գիւղի համար։

Բայց այժմ մենք ապրում ենք արտակարգ պայմաններում։

II

Ձեր ներկայութիւնը այժմեան հանգամանքներում անհրաժեշտ է թէ այն բանի համար, որ կարող լինէք պաշտպանել գիւղը, եթէ աւազակաբարոյ յարձակումներ լինեն նրա վրա, և թէ այն բանի համար, որ նոյնիսկ տեղի չունենայ յարձակման դէպքը։

Արդարև, երբ գիւղը լաւ պաշտպանված է, այն ժամանակ ոչ ոք չի էլ վտահանայ նրա վրա յարձակում գործել և այդպիսով նոյնիսկ վերացված կը լինի ընդհարումներ առաջ բերելու պատրաստվելը։

Ներկայ կրիտիկական րօպէներում, երբ վտանգ կայ, որ նորից կարող են բռնկվել ընդհարումներ, կարևոր է նաև, որ գիւղական տղամարդիկ միջոցներ ձեռք առնէին թոյլ չը տալ այնպիսի քայլեր, որոնք կարող են զրգռել հարևանների կրքերը և յուզմունքների առիթ դառնալ։

III

Մեր ընթերցողներին յայտնի է, թ մէջի այլոց, որ Հին-Նախիջևանի Զահուկ կամ Ջանրի գիւղը գաւառի ամենանաւուր կէտերից մէկն է։ Նա լինելով մեծ գիւղ մօտ 900—1000 մնից բաղկացած և գտնվելով մեծ ճանապարհի վրա, որ կապում է Նախիջևանը լեռնային երկու շրջանների հետ, կազմում էր մի խոշոր կէտ ճանապարհի վրա։

Այնտեղ ապրում են հայեր և թուրքեր մինչև այժմ անբաժան մնացած հողերի վրա։ Հայերը երկու անգամ աւելի փոքր են թուով, բայց ունեն բաւական նիւթական կարողութիւն։

Մինչև այժմ երկու ազգերն էլ ապրում էին խաղաղ և համերաշխ։ Բայց այն օրից, երբ ծագեց նրանց մէջ թշնամութիւն և տեղի ունեցան այն երկու ընդհարումները, որոնցից փնտրեցին նախ հայերը և ապա թուրքերը, լարվեցին յարաբերութիւնները մինչև կատաղի թշնամութիւն։

IV

Ոչ Զահկի հայերն են ուզում թողնել իրանց գիւղը և ոչ թուրքերը։ Միայն ապրելն էլ դժուարացել է։ Ի՞նչ անել։

Մշակվել են մի քանի ծրագիրներ դիւղերի միջև մարգկանց և տների փոխանակութիւններ անելու, բայց այդ ծրագիրներից ոչ մէկին էլ հաւանութիւն չէ գտել երկու կողմից։ Իսկ թշնամի տարրերի մէջ նոր ընդհարումներ ծագելուն արգելք է հանդիսանում գիւղի մէջ եղած զօրքի վաշտը, որը սակայն կարող է հեռանալ։

Զահկի մէջ մնացած հայերը, յատեանայն դէպս, մի մեծ պահանջ են դնում դէպի իրանց այն հայրենակիցները, որոնք ապրում են Թիֆլիսում և ուրիշ քաղաքներում,—վերադառնալ գիւղը, եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ այնքան մեծ թուով, որ գիւղը ազատ լինի յարձակման ենթարկվելու սպառնալիքից։

Զահկեցի պանդուխտները պէտք է լսեն գիւղացիների ձայնը։

V

Զահուկը մի օրինակ է, բայց մի մեծ օրինակ։ Եւ մենք կանգ առանք նրա վրա ցոյց տալու գիւղական ժամանակակից պահանջներից մէկը։

Եթէ Զահուկը չար բաղդի բերմունքով դատարկվի հայերից, այն ժամանակ մերձակայ հայ գիւղերն էլ դատապարտված կը լինեն լքման և ոչնչացման։ Մէկը միւսի հետ կապված, մէկը միւսով պայմանաւորված է։

Վերցրէք Շուշու, Զանգեզուրի, Գանձակի, Ղազախի և ուրիշ գաւառները։ Ամեն տեղ զրված է նոյն հարցը։

Անշուշտ դա պանդխտութեան ընդհանուր հարցը չէ, այլ նրա մի ժամանակակից ճիւղաւորութիւնը արտակարգ հանգամանքներում։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք երէկվայ համարում հաղորդեցինք Զիւանշիրի գաւառի Ադդարա գիւղի պաշարման մասին։ Նոյնը հաղորդում է Հեռ. Գրօթակալութիւնը հետևեալ անորոշ հեռագրով.

Գանձակ, 1 օգոստոսի

Զիվանշիրի գաւառում (?) գիւղի մօտ տաք հրացանաձգութիւն տեղի ունեցաւ փոխ-գնդապետ Վեվերնի և (?)-ի միջև։ Վիրաւորված են 6 զինուոր։

Նոր-Բայազէտ, 31 յուլիսի

Յուլիսի 24-ին այստեղ եկան գաւառապետի պահանջած 130 զինուորները, երկու լեռնային թնդանօթներով (և ոչ թէ կօզակներ, ինչպէս հաղորդել են «Մշակին»)։ Հետևեալ օրը քաղաքը ճաշ տուեց զինուորներին, որոնք մեծ շնորհակալութեամբ և ուրախ տրամադրութեան տակ յուլիսի 26-ին ճանապարհ ընկան դէպի Բասարգէչար, որտեղից, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, քոչոր թուրքերը քշել են 500 գլուխ ոչխար, օգնութեան գնացող կօզակներից սպանել ու վիրաւորել են երեքին, տասից աւելի ձիեր խլել և մի հրացան։ Ղարանլուղ և Բասարգէչար գիւղերում նոյնպէս ճաշ կը տրվի զինուորներին։ Քաղաքիս խաղաղ դրութիւնը ամրվում է։ Երկու դէպքեր են պատահել, որ գաւառից թուրքերը կտրել են ճանապարհորդների առաջը և նոյնիսկ մէկից, ինչպէս ինքն է ասում, խլել են 70 ռուբլի փող ու զիպոն թեթև վէրք հասցրել։

Մօտ օրերս Աղմդան եայլաղատեղի վրա նշանակված կառավարիչ պաշտօնատեղ գնդապետ Ալաշրաֆ-բէգ Շամշադինօվը այստեղ էր։ Քաղաքցս մի քանի ծանօթ հայեր դիմաւորելու գնացին։ Շամշադինօվը 30 հոգուց բաղկացած զօրախմբով իջևանեց պ. Մ. Ափրիկեանի մօտ։ Տեղիս վաճառականներից մէկը զբաղց ճաշի հրաւիրեց, որտեղ ներկայ էին գաւառի պրիստաւներից մէկը։

Շամշադինօվի քաղաք գալու պատճառը գաղտնի մնաց։ Ասում են, որ նա եկել էր միայն գաւառապետին ներկայանալու համար։

Անցեալ օրը քաղաք վերադարձաւ մի անանաբոյժ, որին Նադեժդինօ գիւղի մալականները խորհուրդ չեն տուել շարունակելու իր ճանապարհը, ասելով որ Զիլ և իր շրջակայ գիւղի թուրքերը, կատաղութեամբ լցված, մի ինչ որ բան են ուզում սարքել։ Վեցերորդ օրն է, ինչ գաւառապետ պ. Ղորղանեանը այնտեղ է։ գաւառապետի գնալու գլխաւոր նպատակը թուրքերին հանգստացնելն է։

Տաւարի ժանտախտը արդէն համաճարակի բնաւորութիւն է ստացել և Զիլ գիւղից անցել է բոլոր շրջակայ գիւղերը ու հասել Բասարգէչար գիւղին։ Խուսափելը վերջանալու վրա է, ինչ կը լինի մեր խեղճ գիւղացու հալը, եթէ ժանտախտը շարունակէ իր գոհերը տանել, որովհետև շուտով կը սկսվի և հացահատիկների քաղը ու կալսելը, իսկ առանց եղ ու կովի դաշտային այդ աշխատանքները անհնարին են մեզանում։

Ռ. Ազարեան

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԶԻՎԱՆՇԻՐՈՒՄ

(Իրարանցումը Զիվանշիրի Խաչէնի ձորակում)

Յուլիսի 8-ին

Մեր գաւառի՝ Խաչէնի ձորակի հայ ժողովուրդը քանի օր է, որ իրարանցման, սարսափի, ահ ու դողի, սուգ ու շիւանի մէջ է։ Եւ առաջին անգամը չէ։ Նրանք իրարանցման մէջ են, որովհետև հաստատ աղբիւրից իմացել են, որ թնդանօթաձիգ զօրք է գալու թնդանօթներով ու սպաներով իրանց գիւղը ռմբակոծելու, քարուքանդ անելու, գիւղացիներին պատժելու և այլն, ինչպէս նախկին թղթակցութեանս մէջ էլ էի գրել։ Դրութիւնը սարսափելի ու կրիտիկական է...։ Գալիս են յիշեալ ձորակի հայաբնակ գիւղերը ռմբակոծելու ու բնակիչներին պատժելու՝ յիշեալ հովտի հարաւային կողմում ապրող քիւրդ կիսավայրենի թուրքերի և նրանց դաշտավայրում ապրող քոչոր թաթարքամաների դանգատի համաձայն, որ իբր թէ Խաչէնի ձորակի հայ գիւղացիները յարձակվել են իրանց վրա, իրանցից մարդիկ սպանել և վիրաւորել և քշել նրանց ոչխարները և տաւարները հազարներով՝ 43,000 ռուբլու արժողութեամբ։

Թուրքերը այդ մասին յայտնում են տեղիս կառավարութեան կողմից նշանակված ասպահանուրդն (завѣдывающій эйлагами Джеванширскаго уѣзда), որը իր կողմից կազմելով մանրամասնօրէն արձանագրութիւն՝ ներկայացնում է գաւառապետ պ. Ֆիլիպենկուն, իսկ վերջինս իր բարի... եղբայակցութեամբ նոյն արձանագրութիւնը ներկայացնում է գեներալ Գօլոշչայովին, որը իր կողմից հրամայում է փոխ-գնդապետ Վեվերնին զօրքով, օֆիցէրներով ու թնդանօթներով գնալու Խաչէնի ձորակը և այնտեղ իսկութիւնը ստուգելուց յետոյ, վարվել հայերի հետ ինչպէս հարկաւոր է...։ Քանի օր է գաւառապետ Ֆիլիպենկին տեղիս պրիստաւի և ստրաժնիկների հետ՝ թուով 25—30 հոգի՝ սպասում է Առաջնոր գիւղում թնդանօթների, անհամբեր սպասում է և սրտով ցանկանում է իր աչքի առաջ պատժել ապ անմեղ խեղճ հայերին...։ Պ. Ֆիլիպենկին Առաջնորում սպասելով թնդանօթների՝ միևնոյն ժամանակ սպառնալիքներ է կարդում հայերին։

Վեվերնը յուլիսի 6-ին, կէսօրից յետոյ, Առաջնոր (Իսկանլու) գիւղի շրջակայքում օդի մէջ ծածանվեցին կարմիր դրօշակները։ Առաջնոր գիւղին մօտեցաւ երեք հարիւր կօզակների հեծելազօրքը երեք թնդանօթներով, մի քանի օֆիցէրներով, որոնց գլխաւորը փոխ-գնդապետ Վեվերն էր։ Կազակները ճնշին գիւղից մի վերստ հեռաւորութեամբ, իսկ Վեվերնը օֆիցէրներով եկաւ Առաջնոր գիւղը, որտեղ ներկայ տարվայ ապրիլ ամսի վերջին թուրից սկսած ապրում է մի հարիւրեակ կօզակների հեծելազօրք մի կօմանդիրի ու մի օֆիցէրի հետ՝ թարգման քոչոր թուրքերի՝ Խաչէնի ձորակով ապահով սար բարձրանալու և իշնելու համար։ Բացի Խաչէնի ձորակից կօզակներն ապրում են և մեր գաւառի «Շերհար-Երի» անուանեալ տեղում գտնվող ռուս գաղթականների գիւղում՝ էլի քոչոր թուրքերի ապահովութեան համար, որոնք պէտք է բարձրանան «Սարանդ» մեծ «էլ-Եօլի» ճանապարհով, սակայն այդ ճանապարհով մինչև օրս ոչ մի թուրք սար չէ բարձրացել։ Ուրեմն, մեր գաւառում՝ միայն Խաչէնի ձորակով են թուրք-քոչոր-թաթարքամաները սար բարձրացրել, այն է, միայն երկու օր են գնացել ներկայ տարվայ յունիս ամսի սկզբներում, սակայն անցեալ տարիները երկու ամսով ճանապարհները լիքն էին լինում քոչորներով, այնպէս որ ճանապարհներին տեղ չէր լինում կողմնակի մարդկանց անց ու դարձ անելու...։

Վեվերնը և օֆիցէրները մարդասիրաբար են վերաբերվում ժողովրդին. Վեվերնի կարգադրութեամբ՝ եկած 300 կօզակներից ոչ մէկը գիւղ չը մտաւ չը նայելով որ ամբողջ գիւղը անձրևը հեղեղի նման թափվում էր։ Նրանք միայն ժողովրդից պահանջում էին գարի ձիերի համար, հաց, տաւար՝ մորթելու համար և այլն՝ բոլորը փողով։ Եւ թէպէտ փողով, այնուամենայնիւ գիւղացիք մեծ նեղութիւններով էին ճարում, հնձած խուրձերը ճարահատեալ կալսում էին և գոյացած գարուց և ցորենից ալիւր, հաց պատրաստելով՝ տալիս նրանց։ Միւս օրը առաւօտեան Վեվերնը թնդանօթներով, օֆիցէրներով ու զօրքով մեկնեց Վանք (Գանձասար) գիւղը, որ գտնվում է Առաջնորից 7 վ. հեռաւորութեան վրա։ Այդտեղ ժողովուրդը՝ գլուխ ունենալով իրանց բէգերին՝ Հասան-Ջալալեանցներին ու զգեստաւորված քահանաներին խաչով ու աղ ու հացով դիմաւորում է փոխ-գնդապետ Վեվերնին, որը սիրալիր կերպով աղ ու հացը ընդունելուց յետոյ ասում է ժողովրդին, որ խաղաղ ապրին, աշխատեն հաշտ ապրել թուրքերի հետ։ Ժողովուրդը պատասխանում է, որ ինքը պատրաստ է հաշտ ապրել թուրքերի հետ, եթէ միայն վերջինները հանգիստ թողնեն իրանց ու չը խանգարեն իրանց խաղաղ կեանքը, և, ի միջի այլոց, ասացին, որ իրանք շատ ուրախ են, որ իրանց մէջ տեսնում են պետութեան զօրքն ու պաշտօնեաներին։ Վեվերնի կարգադրութեամբ կօզակները ապրում են էլի գիւղից հեռու դատարկ խանութներում, իսկ իրանք՝ օֆիցէրները գիւղում։ Այստեղ, նմանապէս, նրանք շատ մարդասիրաբար են վարվում ժողովրդի հետ։ Գիւղացիներից պահանջում են միայն «պրովիանդ», «պրովիանդ», որը գիւղացիք թէպէտ փողով են տալիս, այնուամենայնիւ մեծ դժուարութիւններով ու նեղութիւններով, որովհետև պահանջները չեն ճարվում։

Մոռացայ գրել, որ Վեվերնը կօզակներով Առաջնորից Վանք մեկնած օրը, Զիվանշիրի գաւառապետ պ. Ֆիլիպենկին ճանապարհվեց Առաջնորից Օրլով-Դէնիսովկա՝ ռուս գաղթականների գիւղը նահանգապետի մօտ. Վեվերնը Վանք գիւղում սպասում է գաւառապետ Ֆիլիպենկուն, այնպէս որ ամեն բան վերջինիցն է կախված...։ Նա (Ֆիլիպենկին) պէտք է բերէ իր հետ, ինչպէս ասում են, և քննիչին՝ գործը քննելու համար (թուրքերի դանգատի համաձայն, թէ հայերը քշել են նրանց տաւարները, ինչպէս վերև եմ գրել)։ Լսում ենք, որ Վեվերնը հայերի հետ գործը վերջացնելուց յետոյ՝ զօրքով մեկնելու է մեզանից վերևում գտնվող քիւրդական տեղերը, որտեղ տեղական ատիճանաւորի յայտարարութեան համաձայն տիրում է «անարխիա»՝ բառիս բուն նշանակութեամբ։ Թէ որքան ճիշտ են այդ վերջին լուրերը, չը գիտեմ։ Հետևանքի մասին միւս անգամ։

Զ.

ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Հելսինգֆորսում լոյս տեսնող «Финл. Газета» լրագիրը հաղորդում է, որ վերջին անցքերի առիթով մանանաժողովի առաջարկած բանաձևի ծրագիրը քննելիս ասպետութիւնը և ազնուականութիւնը ընդունել են հետևեալ ընդգիրը, որի մէջ ի միջի այլոց ասված է. «Որովհետև կառավարութիւնը միայն ոստիկանական ոյժի օգնութեամբ անկարող է կատարել իր վրա դրված պարտականութիւնները և հարկադրված է դիմել զինուորական ոյժի և որովհետև 1878 թէի զինուորական ծառայութեան վերաբերեալ կանոնադրութիւնը շարունակում է դեռ պահպանել իր զօրութիւնը, դասակարգը գտնում է, որ Ֆինլանդիային պէտք է անպայման իրաւունք տրվի ունենալ իր սեփական զօրքը»։ Հոգևորական և գիւղացիական դասը հատարեա արտայայտել են միևնոյն կարծիքը. անկարգութիւնները ճնշելու համար բոլոր երկրներում դիմում էին զօրքերին, այդ պատճառով վերջին օրերումս պատահած անցքերը ուշադրութիւն գրաւեցին ցաւակցութեան արժանի մի փաստի վրա, որ զինուորական ծառայութեան հարցը մեր երկրում պահպանում է դեռ իր ապօրէն զոյութիւնը։ Այդ ի նկատի առնելով դասակարգերը անպայման անհրաժեշտ են համարում, որպէսզի յանձնարարեն ամենայն հարկաւոր միջոցներ՝ զինուորական ծառայութեան հարցը մեր երկրում պահպանում է դեռ իր ապօրէն զոյութիւնը։ Այդ ի նկատի առնելով դասակարգերը անպայման անհրաժեշտ են համարում, որպէսզի յանձնարարեն ամենայն հարկաւոր միջոցներ՝ զինուորական ծառայութեան հարցը մեր երկրում պահպանելու համար։ Հարցը վերջացնելուց յետոյ՝ զօրքով մեկնելու է մեզանից վերևում գտնվող քիւրդական տեղերը, որտեղ տեղական ատիճանաւորի յայտարարութեան համաձայն տիրում է «անարխիա»՝ բառիս բուն նշանակութեամբ։ Թէ որքան ճիշտ են այդ վերջին լուրերը, չը գիտեմ։ Հետևանքի մասին միւս անգամ։

Զ.

ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Հելսինգֆորսում լոյս տեսնող «Финл. Газета» լրագիրը հաղորդում է, որ վերջին անցքերի առիթով մանանաժողովի առաջարկած բանաձևի ծրագիրը քննելիս ասպետութիւնը և ազնուականութիւնը ընդունել են հետևեալ ընդգիրը, որի մէջ ի միջի այլոց ասված է. «Որովհետև կառավարութիւնը միայն ոստիկանական ոյժի օգնութեամբ անկարող է կատարել իր վրա դրված պարտականութիւնները և հարկադրված է դիմել զինուորական ոյժի և որովհետև 1878 թէի զինուորական ծառայութեան վերաբերեալ կանոնադրութիւնը շարունակում է դեռ պահպանել իր զօրութիւնը, դասակարգը գտնում է, որ Ֆինլանդիային պէտք է անպայման իրաւունք տրվի ունենալ իր սեփական զօրքը»։ Հոգևորական և գիւղացիական դասը հատարեա արտայայտել են միևնոյն կարծիքը. անկարգութիւնները ճնշելու համար բոլոր երկրներում դիմում էին զօրքերին, այդ պատճառով վերջին օրերումս պատահած անցքերը ուշադրութիւն գրաւեցին ցաւակցութեան արժանի մի փաստի վրա, որ զինուորական ծառայութեան հարցը մեր երկրում պահպանում է դեռ իր ապօրէն զոյութիւնը։ Այդ ի նկատի առնելով դասակարգերը անպայման անհրաժեշտ են համարում, որպէսզի յանձնարարեն ամենայն հարկաւոր միջոցներ՝ զինուորական ծառայութեան հարցը մեր երկրում պահպանելու համար։

—Սենատոր Մեսելինը ստացել է Ֆինլանդիայի զանազան տեղերից, միութիւններից և առանձին անհատներից հեռագրական ողջոյններ կարմիր գվարդիայի յեղափոխական գործողութիւնների դէմ։

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Յուլիսի 20-ին և 29-ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանում կայացան կենտրօնական նըպաստամատոյց յանձնաժողովի նիստերը։

Յանձնաժողովը լսեց.

1) Երևանի նպաստամատոյց մասնաժողովի գրութիւնը, որով յայտնվում է, թէ համաձայն յանձնաժողովի կարգադրութեան նա ուղարկել է իր անդամներից երկուսին և մի ճաշարարպետ Ուլիա-Նորաշէն՝ այդ գիւղի աւերված տները վերաշինելու համար, յատկացնելով այդ գործին յանձնաժողովի սահմանած 10,000 ռուբլի։

2) Երևանի թեմական նպաստին փոխանորդ կարապետ վարդապետի յայտարարութիւնը, մայիսի 27-ին գրված, որով ներկայացնելով կենտրօնական յանձնաժողովին ամսրամասն հաշիւ իր ստացած դումարների աղէտեալ հայերի համար և նրանց գործադրութեան, ներկայացնելով փաստաթղթեր և «Արշալոյս» ու «Հովիւ» թերթերի այն համարները, ուր տպված են մանրամասն այդ հաշիւները և զանազան բացատրութիւններ նրանց վերաբերմամբ, խնդրում է քննել այդ հաշիւները և յայտնել յանձնաժողովի կարծիքը ու եզրակացութիւնը նրանց մասին, ի նկատի ունենալով որ մամուլի մէջ մեղադրանքներ են բարդվել իր վրա։

Քննելով այդ հաշիւները, յանձնաժողովը գտաւ, որ կարապետ վարդապետը ստացել է ի նպաստ հայ աղէտեալների 1) 5089 ր. 50 կ. (որից 3000 ր. պ. Զանգեզուրեանից, 1000 ր. պ. Բունեաթեանից, 500 ր. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդից, 325 ր. պ. Ս. Ցարբինեանից, 200 ր. Թիֆլիսի քահանաների խնայողական գանձարանից և այլն) և 2) 750 ր. առանձին մի քանի տեղերից—ընդամենը 5839 ր. 50 կ.։ Այդ գումարից նա 3035 ր. ուղարկել է զանազան տեղեր, նուիրատուների ցանկութեան համաձայն (նպաստ. յանձնաժողովին, Շուշի, Նախիջևան և այլն), մնացած 2054 ր. 50 կ.-ը գործադրվել է հետևեալ կերպով—1) 500 ր. ծախսված է արկածեալների վրա Լեոն վարդապետի միջոցով, 2) 2000 ր. իրա Կարապետ վարդ. Հեռքով։ Այդ 2500 ր. ապացուցագրերը կան։ Ուրեմն մնում է 54 ր. 50 կոպէկ։ Բացի սրանից Կարապետ վարդապետը ստացել է 750 բուբլի զանազան տեղերից (150 ր. Երևանի մասնաժողովից 400 ր. Նախիջևանի մասնաժողովից և 200 ր. վիճակային արքիեպիսկոպոսից) և 114 ր. Նախիջևանի մասնաժողովից, ուրեմն ընդամենը Կարապետ վ. ստացել է ծախքերի համար 918 ր. 50 կ.։ Ահա այս գումարից ծախսել է հեռագրերի համար 300 ր. և 68 ր. 50 կ. մանր ծախսեր, ուրեմն 368 ր. 50 կ., որոնց ապացուցագրերը կան, իսկ 550 ր. ծախսել է մայիսի 10-ից սկսած մինչև հոկտեմբեր ամիսը իր ճանապարհորդութիւնների և այդ ճանապարհորդութեան հետ կցված զանազան ծախսերի վրա, երբ նա, իբրև թեմական, հայ-թուրքական ընդհարումների պատճառով, ստիպված էր գնալ Նախիջևան, շրջել գիւղերը, վերադառնալ, գնալ Թիֆլիս, նորից Նախիջևան և այլն։

Քննելով այդ բոլոր հաշիւները, յանձնաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ 5 ամսվայ ընթացքում այդ ճանապարհորդութիւնների վրա կատարված 550 ր. ծախքը չափաւոր է։

3) Բժշկներ Զաւրեան և Նազեան զեկուցմամբ արեցին առաջինը հայ-թուրքական խառն բժշկական արշաւախմբեր կազմելու և երկրորդը՝ Վարանդայի և Շուշու ներկայ վիճակի մասին։ Յայտնվեց, որ խառն բժշկական արշաւախումբ կազմելու համարելի գաղափարը ներկայումս անկարելի է իրագործելի։ Իսկ բժիշկ Սաղեանի զեկուցումը ցոյց տուեց, որ պէտք կայ ուղարկել Խաչէն և Վարանդա 2 բժիշկ և 2 ֆելդշէր։ Բացի դրանից Շուշու չքաւոր դասակարգը վերջին ընդհարումների պատճառով սաստիկ նեղութեան մէջ է, պէտք կայ զանազան պաշարեղէն հասցնելու։

Յանձնաժողովը որոշեց ուղարկել 2 բժիշկ և 2 ֆելդշէր Խաչէն և Վարանդա, ուղարկել 5000 ր. Շուշու նպաստամատոյց մասնաժողովին հայ ժողովրդի կարիքներին գոհացնում տալու համար։

4) Շուշու քաղաքային վարչութիւնը, դիմելով յանձնաժողովին, խնդրում է օգնութեան ձեռք կարկառել քաղաքային հիւանդանոցում բժշկվող հայ վիրաւորներին, հոգալով նրանց ծախսերի մի մասը, որովհետև հիւանդանոցը չունի միջոց բոլոր վիրաւորներին խնամելու։

Յանձնաժողովը որոշեց ուղարկել հեռագրով 1000 ր. Շուշու հիւանդանոցին։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Դաշնակցական (Ծաւրմ. գաւ.), յուլիսի 28-ին

Թող ներվի անդրադիտութիւնս, բայց չեմ կարող չը պատմել մեր, գիւղացիներիս ցաւերը, որպէս զի աշխարհ իմանայ, թէ ինչեր ենք մենք քաշում դաշնակցականներից։

Պատմիմ նդելուՀ՝ մնայն։

Մեր անբաղդ գիւղումն էլ ընտրութիւն եղաւ։ Ամսոյ 18-ին, երբ որ մեր ամբողջ գիւղը գնացել էր Արաղ ջուր կապելու, գալիս է մեր գիւղը Իգդիրից Տիգրան Ղազարեանը, իրան օգնական ունենալով մեր հասարակութեան գրագիրը (писарь), և հաւաքում են եկեղեցին մի քանի անչափահաս երեխաներ և սկսում են պատուիրակներ ընտրել, օգոստոսի 15-ին կայանալիք կենտրօնական ժողովի համար։ Ժողովը բացվելուն պէս Ղազարեանը սկսում է ասել, որ թէ պատուիրակը և թէ պատգամաւորը անպատճառ պէտք է դաշնակցական լինեն։ Երբ եկեղեցում եղողներից մէկը ուզեցել է մի քան խօսել, Ղազարեանը ասել է, որ Դաշնակցութիւնը իրան պատուիրել է գրանից աւելի բան չը խօսել, «և թոյլ էլ չեմ տայ ոչ ոքի խօսելու։ Դրանից յետոյ, ի հարկէ, ինքը Ղազարեան չէ ընտրվում, և իր նման մի ուրիշը։

Երբ հասարակութիւնը վերադարձաւ Արաղից, իսկոյն քաղաքից հայը գործակալին, այլ ընտրութիւնը բեկվեց, ու գործակալը նոր ընտրութիւն նշանակեց։ Նոր ընտրութեանը մասնակցում էին 400 խնդասաս մարդիկ։ Ընտրվեցին պատուիրակներ մեր գիւղացի Մարգար Ղարասեանցը (որը յայտնի գաւառապետ Բօգուսլավսկու օրով միակ մարդն էր հասարակութեան շահերի պաշտպանութեան գործում և դրա համար էլ հինգ տարի աքսոր ուղարկվեց) և Մկրտիչ Յովհաննիսեանը։

Ընտրութիւնից երկու օր անցած մեր գիւղը եկան երկու իգդիրցի դաշնակցականներ՝ Մարտիրոս Թիրզիբաշեան (չարչի) և Արամ Վանեցեան, հետներն ունենալով չորս հատ դիմված դաշնակցական զինուորներ, և սկսեցին փողոցով անցողներին, առանց խորութեան սեռի և հասակի, բռնել ու քաշ տալ եկեղեցի։ Երբ այդ բանը իմացաւ հասարակութիւնը, մի քանի չափ խելաս մարդիկ, որոնց թւում և Մարգար Ղարասեանցը, եկեղեցում Իգդիրից եկած պարոններին հաց տուեցին։ «Մինչ մեր վերջին ընտրութիւնը բեկվել է, և ոմ է բողոքել այդ ընտրութեան դէմ, կամ ձեզ ոմ է կարգադրել նոր ընտրութիւն կատարելու»։ Իգդիրից եկածները, երկար չը մտածելով, հրամայեցին մտնողը եղած զինուորներին ջարդել Ղարասեանցին։ Քաջ զինուորները խսկոյն հրամանը կատարեցին և սկսեցին ամբողջ հասարակութեան առաջ եկեղեցում ծեծել ու այդպէս ծեծելով մինչև փողոցը հասցրեցին խեղճ զոհին։ Այդ վարմունքի համար հասարակութիւնը միւս որը Վեհափառ Հայրիկին հեռագիր ուղարկեց։

Գուլուշա, Մօլլամամար և Աբասգոլ գիւղերին էլ Դաշնակցութիւնը իրաւունք չը տուեց օրինաւոր ընտրութիւն կատարելու, այլ ինքը իր անդրագէտ իգդիրցի զինուորներից ամեն մի գիւղի համար մէկին ընտրել տուեց։ Այդ նշանակվի ընտրվածներն են՝ Արտաշէս Պարսաւունին, Հայրապետ Կանայեանցը և Սմբատ Աբրահամեանցը։

Ամենից հետաքրքիրն էր Իգդիրի ընտրութիւնը։ Պէտք է տեսնէիք, թէ ինչպէս Բօգուսլաւսկու օրով եղած նասարակութեան դրագիրները այժմ դաշնակցական են դառել և եկեղեցում իրանց զինուորներով ինչպիսի մանեսվր էին անում։ Հասարակութեան մեծամասնութիւնը, այդտեղ ղզված այդ վարմունքից, ընտրութիւնը թողած հեռացաւ։

Այժմ դիմում եմ հայ հասարակութեան. դատեցէք դուք ինքներդ. մինչ ընտրված պատգամաւորները հայ հասարակութեան ընտրելիներն են։ Ահա ձեզ և հասարակութեան շահերը պաշտպանող, գաղափարի ազատութեան, կեանքի անձեռնմխելիութեան և ընդհանուր սկզբունքներ քարոզող դաշնակցականների վարմունքը։ Ո՞ւր գնայ հայ գիւղացին, ում դիմի նա։ Այս դեռ պատահած դէպքերի փոքր մասն է։ Մեր գաւառում բոլոր պաշտօնները Դաշնակցութիւնը մենաշնորհ է դարձրել։ ով որ դաշնակցական չէ, հասարակութիւնը իրաւունք չունի նրան հասարակութեան պաշտօնեայ ընտրել, ինչ պաշտօն ուզում է լինի։ Իսկ եթէ ուզում էք լաւ, չաղ պաշտօն ստանալ, եղէք դաշնակցական, փողոցներում նրանց վարմունքը գովեցէք, և այն ժամանակ ամեն պաշտօն ձեզ համար պատրաստ կը լինի։

Դաշնակցանունցի

(Բագուի ընտրիչների տիպրով)

Յուլիսի 28-ին

Երէկ «Баку» լրագրի 161-րդ համարի առաջին երեսում մի վարանուն առանի, հայատառ խոշոր յայտարարութիւն կար տպագրված՝ ամսոյս 16-ին. կայացած տարօրինակ ընտրութիւնների առիթով։

Այդ պաշտօնական յայտարարութեան մեծ նորութիւնը այնքան ընտրութեան հետևանքը չէր, որ առանց այդ էլ ամենին յայտնի էր տասնեակ հազար կարմիր թռուցիկներից, որքան հետևեալ տողերը.

«Ընդ սմին յայտնում եմ հայ հասարակութեան, որ ընտրիչներն էականապէս համաձայն են Վեհափառ Հայրապետի սրբատառ կօնդակների(?). այս մասին եղած թեր ու դէմ առարկութիւնները բարի ցանկութեան հետևանք չեն։

«Գործակալ եկեղեցեաց հայոց՝ Զաւէն վարդապետ»։

Ափսոս որ խնայելով մէկ ռուբլին բաց են թողված՝

Թող կորչէ իրաւունքն ու ճշմարտութիւնը։

Կեցցէ ոյժն ու եպիսկոպոսութիւնը։

Եթէ յայտարարութիւնը կարող է դատողութիւններ անել, վճիռ ու դատավճիռներ արձակել, ապա ինչու թռուցիկ էլ չէր կարող լինել։

Եթէ դա լոկ պաշտօնական յայտարարութիւն է, ուրեմն և պէտք է տար մեզ կատարված ու կատարվելիք գործի մասին տեղեկութիւ

մեր, թէ իր ասելիքը կասէր և թէ ձրի էլ կընպագրվէր. չէ՞ որ յայտարարութեան իւրաքանչիւր բառին վճարել է պէտք։

Այժմ նայենք յայտարարութեան այս խօսքերին. «Ընտրութիւններն էականապէս համաձայն են Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներին»։

Իսկ տեղի ունեցած զեղծումները, որի մասին կազմված արձանագրութիւն կայ և որի պատճէնը, վարդապետ, չը յօժարեցիք տալ բողոքողներին. իսկ այն, որ ընտրութեան օրը մեզ բողոքողներս ասում էիք.

«Ես էլ ընդունում եմ, որ ծխական ժողովներ չեն եղել. եթէ նախապատրաստական ժողովներ լինէին, ինչ կարծիք, լաւ կը լինէր. որ ծխականների ցուցակներ էլ չը կան, իրաւացի է, բայց ինչպէս արած. շատ անգամ եմ քահանաներից պահանջել, որ ունենան. այդ պահանջը ութ տարի շարունակ մնում է պահանջ, բայց չեն ներկայացնում, ներկայացրածներն էլ շատ կրճատ ու թերի են. նորից կազմելու համար էլ ժամանակը սուղ է» կայն հայն... Այժմ ինչպէս է, որ այդ «բոլորով հանդերձ» «ընտրութիւններն էականապէս համաձայն են Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակներին»։ Այս էլ չէ՞ նշանակում՝

Թող կորչի՛ ճշմարտութիւնը...

Իսկ «եկեղեցեաց գործակալ»,

Վեհ. Կաթողիկոսի կոնդակները կարդացվի՞լ են ձեր եկեղեցիներից մէկում.

Ա.տառաքի վարդապետ, եթէ ցանկանում էք, որ ձեզ կոչեն «Հայր Սուրբ», ասացէք.

Ի՞ր տեղ, երբ են եղել ձեր ծխական ժողովները. հայ հասարակութիւնը ո՞ր ծխական ժողովումն է լսել Վեհ. կոնդակը. երբ է բաց արվել նրան այդ կոնդակի իմաստը։

Եթէ չէ կատարվել, ապա ինչո՞ւ այդ լուրջ թերութիւնների դէմ բողոքողներին պոլիցիական կանոններով չարաչարների և անբարեմիտների շարքումն էք դասում։

Եթէ ճշմարտութեան խաչը կրելու պարտաւորութիւնը սիրելի է ձեզ, ապա ինչու՞ էք դրժարվում նրանից։

Մ՚թէ վախեցաք։

Ուրեմն «լոյսի և ճշմարտութեան» առաջ, որ ինքը Քրիստոսն է, կատարեցէք ձեր պարտքը սրբութեամբ, քանի ուշ չէ։

Յ. Խաչատր

Շուշի, 12 յուլիսի

Համաձայն Վեհափառ Հայրապետի շրջաբերական կոնդակի, Ղարաբաղի ամբողջ թեմը էջմիածնում կայանալիք կենտրոնական ժողովում պիտի ունենայ ութ պատգամաւոր, որոնցից մէկը Շուշու հայ հասարակութիւնը պիտի տայ։ Այդ հիման վրա կոնսիստորիայի նախագահ Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեան մի հրաւէրով ծանուցեց քաղաքիս հայ հասարակութեան, որ քսաներս չորս եկեղեցիների ծխականները ընտրեն քսան պատուիրակներ (իւրաքանչիւր եկեղեցուց 5 պատուիրակ) մի ուրիշ ժողովում առանձին հրաւէրով իրանց միջից կամ դրսից մի պատգամաւոր ընտրելու համար։ Առաջին ժողովը, որ նշանակված էր յուլիսի 2-ին, չը կայացաւ, ծխականների օրինաւոր թիվ (1/5) բացակայութեան պատճառով, և ժողովը յետաձգվեց միւս անգամվայ։ Երկրորդ և վերջին ժողովը նշանակված էր յուլիսի 9-ին։ Նախ քան ծխական ընտրութիւնները, բոլոր թաղերում եղան նախընտրական ժողովներ այդ նպատակով։ Ժողովներում (յուլիսի 8-ին երեկոյեան) բաժանելով ժողովականներին Դաշնակցութեան թեկնածուների անունները, տպագրված թերթիկներ, եռանդուն գործակալները ասում են. «Կը դանք և այս մարդկանց կընտրենք»։ Sapienti cat!

«Էլ ինչի՞ ենք գնում ընտրութեան, սա ինչ ապատ ընտրութիւն է, երբ քո կամքի ու մտքի վրա բացարձակ բռնութիւն են գործադրում. էհ, չեմ գնալու. իրանք գիտեն. թող ինչ ուզում են անեն»—փախում են մարդիկ միմեանց ականջին։ «Եղբայր, խօ մենք տուաք չենք. ինչու՞ են ստիպում մեզ, որ մենք այս ինչ մարդուն ձայն տանք. բաւական է որքան լռեցինք. պէտք է բողոքել»—խօսում էր մի երրորդը քիչ բարձր ձայնով։ «Դէ որ սրանց պիտի ընտրենք, էլ ինչ են մեզ նեղութիւն տալիս, կանչում ժողովների. թողէք թուղթ տալ տուողը տանէ և ասէ, սրանք են լինելու ընտրվողները, պրծնի գնայ. էլ ինչ ժողով։ Բաղրա, ես ինչ գիտեմ ընտրութիւն բաղրա»—նկատում էր մի ուրիշ։

«Յաղթանակը տարված է» այսպէս թէ այնպէս. յուլիսի 9-ին բոլոր եկեղեցիներում կատարվեցին չակերտաւոր ընտրութիւններ։ Մեղրեցոց եկեղեցում «միահամուռ ընտրվեցին» Դաշնակցութեան պատգամաւորի 5 թեկնածուներ՝ որոնք են. Գ. Մելիք-Շահնազարեան Ար. Տէրտէրեան, Յ. Թաթիանց, Ա. Գեանջեցեան, Դեր. Բալայեան։ Ագուլեաց եկեղեցում Դաշնակցութեան թեկնածուներից ընտրվել են Ա.ս. Աթաբէկեան, Տ. Աթաբէկեան, Ռ. Փրկչանեան. սեացան երկուսը և ընտրվեցին դրանց տեղ ոչ-դաշնակցականներ՝ Կ. Հախումեանց և Գր. Մինասբէկեանց։ Դաղանչեցոց եկեղեցում միաձայն ընտրվեցին Դաշնակցութեան 5 թեկնածուները որոնք են՝ Ասլան-բէկ Թարխանեանց, Ա. Մէլիքեանց (վերջինս թեկնածութիւնը թւում է թէ հասարակութեան աչքում թող փչելու համար է դրված), Արտ. Մարտիրոսեանց, Ն. Տէր-Սահակեանց և Սիմ. Նօրինեանց։ Վերին Թաղի եկեղեցում Դաշնակցութեան թեկնածուներից ընտրվեցին երկուսը՝ Գ. Դուլի-քեօխվեան Ի. Իշխանեանց. միւս ընտրվածներն են Ի. Տէր-Յովհաննիսեան և Թ. Տէր-Յովհաննիսեան, Ե. Այդինեանց։

Ա. Աղաջանեան

Յուլիսի 28-ին

Մենք էլ ընտրեցինք... ներողութիւն. մեզ էլ ընտրել տուեցին պատգամաւորներ կենտրոնական ժողովի համար։

Դեռ ընտրութիւններից առաջ, Բաղուի եկեղեցիների «հրաժարված» գործակալ և մեր քոյրը հասարակական գործերի աստուածընտիր տնօրինող Զաւէն վարդապետը յայտարարել էր ընտրութիւնների օրը և տեղերը, ի հարկէ, ըստ իւր ամենակարող կամքի և իրաւունքի։

Բաղուի ամբողջ հայ հասարակութիւնը (ըստ Զաւէն վարդապետի «սատանէական» 35,000 հոգի ձայնի իրաւունք ունեցողները) պէտք է տար 35 պատուիրակ 2 պատգամաւոր ընտրելու համար։

Ընտրողական քուէաթերթերը ընդունում էին Զաւէն վարդապետի կողմից «նշանակված» անձինք, քաղաքի զանազան մասերում, Դաշնակցութեան զինուորների հսկողութեան տակ։ Զանազան հանգամանքներով ներկայ չը գտնվելով քաղաքի և ոչ մի մասում կատարվող քուէարկութեանը, ես իբրև օրինակ կը բերեմ միայն այն ընտրողական քաղաքամասը, որին կարողացայ ներկայ գտնվել, աւելացնելով որ, վստահելի անձնաւորութիւնների ասելով, համարեա թէ ամէն տեղ էլ նոյնն է կատարվել։

Հայկական գաղութումն ենք։ (Արմանիքեանց)։

Քուէների ընդունելութիւնը նշանակված է եկեղեցու մէջ։

Քուէաւուփի շուրջը նստած են գաղութիքահանան և տեղական տուները եկեղեցու առաջ կանգնած են Դաշնակցութեան պրոպագանդիստները, իրանց թեկնածուների անունները վրան տպագրված կարմիր թերթիկներով։ Ժողովուրդը շատ դանդաղ է գալիս ընտրութիւններին։ Կէսօրվայ ժամի 2-ն է, բայց հազիւ 60—70 մարդ են քուէ տուել։ Սակայն պէտք է աշխատել անպայման ընտրել, ինչ կերպ էլ որ լինի. և ահա Դաշնակցութեան հրամանատարները զինուորներ են ուղարկում տները «ընտրողներ» բերելու, և երկար շարքերով միմեանց յետևից եկեղեցի են գալիս կանայք և աղջիկներ, անգիտակցաբար վերցնում են կարմիր թերթիկները և գցում քուէատուփը։

Ընտրութիւնը վերջանում է։

«Համազգային» ժողովին մասնակցում են գաղութի 3000 ձայն ունեցող ծխականներից ընդամենը 608 հոգի, այն էլ մեծ մասամբ անչափահաս կանայք և աղջիկներ։

Ընդամենը Բաղուում 35,000 բնակչից մասնակցել են ընտրութիւններին 7648 հոգի, և այն էլ մեծամասնութեամբ ձայնի իրաւունք չունեցողները, և այդ ընտրութիւնները օրինաւոր են համարվում։

Ընտրութիւնների ձևի մասին հետաքրքիր բանակռիւ է սկսվել Զաւէն վարդապետի և Եղիշէ քահ. Դեղամեանի մէջ, որոնցից վերջինը հաստատում է, որ Բաղուում ընտրութիւնների ձևը մեզանցից հակառակ է եղել Կաթողիկոսի ինստրուկցիաներին։ Հետաքրքիր է ինչով կը վերջանայ այս բանակռիւը։

Դիմաքսեան

PERPETUUM MOBILE

Բիւրօկրատները ամէն տեղ իրար նման են, իբրև նոյն սիստեմի և աշխարհայացքի տիպիկ արտայայտութիւններ։ Բիւրօկրատիական սիստեմը և ասիատական պեացքը կարելի է ամփոփել երեք կլասիկ նախադասութիւնների մէջ, որոնք կազմում են բոլոր երկիրների և ազգերի բիւրօկրատների հաւատամքը, չը նայած՝ թէ այդ բիւրօկրատի գլխին հանդիսանալ գլխարկ լինի դրած, թէ ուրիշից թողցրած կամ փոս վերցրած Ֆրիգեան կարմիր գլխարկ։

Բիւրօկրատիական հաւատամքը շատ կարճ է և կարուկ և ձևակերպվում է այսպէս.

1) Ես եմ ամբողջ կառավարութիւնն էլ ժողովուրդն էլ։

2) Ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ։

3) Նպատակը արդարացնում է միջոցները։

Արդ, քննեք անաչառօրէն բոլոր այն փաստերը, որոնք, չը նայած արդի դաշնակցական բիւրօկրատների ձեռք առած բոլոր խստութիւններին և ճնշումներին, այնուամենայնիւ թափվում են գաւառների զանազան անկիւններից, ինչպէս առատութեան եղիւրից, տեղական ոչ-դաշնակցական մամուլի մէջ։ Վերլուծէք, համեմատեք այդ բոլոր քստմնելի փաստերը և դուք, եթէ ապա էք դաշնակցական բիւրօկրատիայի խոստացած բարիքներից և չէք տենչում վայելել նրանց ֆալոբրատիպը, պէտք է խոստովանէք, որ շատ դէպքերում թուրք և ռուս բիւրօկրատները պէտք է դասեր վերցնեն մեր ազգային հանճարեղ բիւրօկրատներից։ Եթէ այդ ազգային բիւրօկրատները ուզում են չը բաւականանալ ժխտական շարլոն խօսքերով, պէտք է ընդունեն ժողովրդից անկախ ընտրված մի ֆեզոք դաստարան, որի անդամներին տրվի անձի ապահովութիւն բանի ոյժերի ճնշումներից և իրաւունք՝ շրջելու գաւառներում և տուգելու ժողովրդի բոլոր գանգատները։ Բայց ո՞ր բիւրօկրատը կընդունի այդպիսի յանդուգն առաջարկ։

Լաւ իմանալով այդ՝ մեզ մէջ շարունակել մերկացումները, որովհետև այդ ընտրատուութիւնը անբարոյականացնում է մեր ժողովուրդը խապառ։

Այդ ազգային բիւրօկրատների պոլիտիկային տակտիկան չափազանց պրիմիտիվ է. նրանք որոշել զել ձայնով բոլոր մեղադրանքներին պատասխանել՝ «սուտ է, զրպարտութիւն է», և յանցագործ հայհոյել և խուժանի օգնութեանը դիմել։ Իրանց այս կամ այն հակառակորդին վարկաբեկ անելու համար մի սուտ կը հնարեն. սուտը կը ընդունէք, զրպարտութեան կը դիմեն. զրպարտութիւնը կը մերկացնէք, կը կեղծեն, նոյն իսկ տարբեր ամիսները գլխիվայր դնելով. կեղծիքը կը ընդունէք, նոր մանեվրներով և ֆոկուսներով կը դիմեն. այդ էլ լոյս աշխարհ կը հանէք, կը սկսեն ձեր խօսքերը աղաւաղել, խեղաթիւրել, որպէս զի գրքգանն խուժանը. այդ էլ կը պարզէք, կը նորոգեն գործելակերպի նոյն շրջանը սկզբից, մինչև որ յոգնէք Սիզիֆեան այդ աշխատանքից։

Ճարպիկ է մտածած, չէ՞։ Բայց դա էլ ինքնուրոյն մի զէնք չէ, այլ փոխ է վերցրած թուրք և ռուս բիւրօկրատների ժանգոտված արսենալից։

Եւ այդ տիպի պարոնները յատկութիւն ունեն իրանց «յեղափոխական» անունները։

Հոգ չէ։

Հայ ժողովուրդը արդէն մի շատ ծանր խօսք ասաց դրանց հասցէին. «Վերցրէք մեր քսակը, բայց ապա թողէք մեր կղակը»...

Եւ մի անգամ զարթնած գիտակցութիւնը կանգ չի առնիլ, մինչև որ հայ ժողովուրդը ստրկացնող դաշնակցական բիւրօկրատիան չի կերպարանափոխվիլ և մինչև որ Ֆրիգեան գլխարկը չի ծածկիլ ազատութեան իսկական զինուորների աւելի արժանաւոր և խելահաս գլուխները։ Մերկացումները սկսված են, և գիտակցող ժողովուրդը դատի է ենթարկում իր ազատութիւնը բռնաբարող և վստահութիւնը ի չարը գործ դնող այդ ազգային բիւրօկրատներին։

Լ. Սարգսեան

ԱՆԱՆՈՒՆ ՕՃԻՐԸ

Ռուսաստանի պահպանողական կուսակցութիւնների իդէօլոգները դեռ անցեալ դարի 40-ական թւականներից միշտ ասում էին, թէ Ռուսաստանը մի արտաքոյ կարգի, եւրոպական երկիրներին չը նմանող, երկիր է ու իր կառավարչական եղանակներով, իր հասարակական կազմով, առաջադիմելու եղանակով և այլն նա միշտ ինքնուրոյն է եղել, ինքնուրոյն էլ կը մնայ, առանց երբևիցէ եւրոպական երկիրների օրինակին հետևելու։ «Ընդհակառակը, դեռ եւրոպացիները կարող են շատ բան Ռուսաստանից օրինակ վերցնել»—ասում են նրանք ինքնահաճ կերպով։

Թէ որ ասուիճան իրաւացի կամ սխալ էին այդ արտայայտված կարծիքները, դրա մասին չէ այժմ մեր խօսքը։ Բայց մենք ուզում ենք այստեղ մատնանիշ անել, որ, յիրաւի, Ռուսաստանի հին ռեժիմի պաշտպան կուսակցութիւնները, իրանց գլուխ ունենալով հէնց իրան բիւրօկրատիական կառավարութիւնն ու մանաւորապէս ոստիկանական դեպարտամենտը, ոչ մի ջանք չեն խնայում Ռուսաստանը մի արտաքոյ կարգի այնպիսի երկիր դարձնել, որը ոչ միայն եւրոպական երկիրներին չը կարողանայ նմանվել, այլ որ նոյնիսկ Ասիայումն ու Աֆրիկայումն էլ զըժուար լինի նրա նման մի երկիր գտնել։

Եւ իսկապէս, երկրագնդի ո՞ր անկիւնումն է տեսնված, որ կառավարութիւնն ու իր պաշտպան կուսակցութիւնները սիստեմատիքաբար պօղոմներով զրպվեն ու իրանց հակառակորդ տարբերին պօղոմների միջոցով ընկնջնչ անելու աշխատեն։ Զենք կարծում, որ նոյնիսկի հնարաւոր լինի պօղոմ բառը մի օրէնէ լեզուով թարգմանել, թէկուզ զուլուսների լեզուով։ Դա ռուս չօվինիստների ամենանիքնուրոյն և կատարելատիպ սահմանադրութիւն է, որին կարող են շատ ու շատ վայելենի ցեղեր նախանձել։

Բայց զրանով չէ վերջանում Ռուսաստանի պահպանողականների և նրանց ներկայացուցիչ բիւրօկրատիայի հանճարեղ սահմանադրութիւնը։ Նրանք վերջերս մի այլ նոր միջոց էլ հնարեցին, իրանց հակառակորդների դէմ հուսելու նրանց ոչնչացնելու համար։ Այդ միջոցը գաղտագողի կերպով իրանց հակառակորդ բանակի գլխաւոր զեկավարներին խողխողելն է. ինչ նրանք վերջերս արեցին Մ. Ե. Հերցենշտէյնին և սպառնում են անել ուրիշներին էլ։

Այդ աւազակային միջոցն էլ պօղոմի նըման մի այնպիսի երբէք չը տեսնված ու չը լսված եղեռնական ոճրագործութիւն է, որը ամենազգուելի գարշանք ու անդուսպ զայրոյթ և բարկութիւն միայն կարող է առաջացնել ամբողջ աշխարհում դէպի այն կառավարութիւնը, որ յանդգնութիւն ունի իրան եւրոպական, քաղաքակիրթ, լուսաւորեալ պետութիւնների շարքում դասել։ Դա մի անադին սև արատ է, որ ամբողջ Ռուսաստանի վրա պիտի տարածվի, և շատ տարիներ անցնելու են, որպէսզի այդ արատը մոռացվի։ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ Բօրբոնների կառավարութեան ձեռքով կատարած տեռորները նսեմանում են Հերցենշտէյնի սպանութեան գործի առաջ և նսեմանում են այն տեսակետով, որ այն տեռորները կատարվում էին, գոնէ, բացարձակ կերպով, լոյս ցերեկով, իբր թէ օրէնքների ու դատարանաց վճռի համաձայն, այնինչ Միխայիլ Եակովլևիչին սպանեցին վարձու տեռորիստների միջոցով, գաղտագողի, մութ գիշերով ու եռեկից գնդակահարելով։

Կրկնում ենք, դա մի չը տեսնված եղեռնական ոճրագործութիւն է մեր արդի բիւրօկրատիական կառավարութեան կողմից, որովհետև նա, չը բաւականանալով այն բոլոր տեռորներով, որ կատարում է բացարձակ ու ապաշարա կերպով, գաղտագողի տեռորական միջոցներն էլ է դիմում։ Այդ կարգի տեռորների դիմում են առհասարակ այնպիսի կազմակերպութիւններն ու մարմինները, որոնք իրանց թէ շատ թոյլ են զգում և թէ զուրկ են լինում բացարձակ կուռելու և մարտնչելու միջոցներից։ Բայց լինել մի պաշտօնական կառավարութիւն, ունենալով իր ձեռքում և արամադրութեան տակ ամբողջ զատաստանական ու վարչական զեկը, բազմաթիւ ու հոյակապ բանտեր, ընդարձակ աքսորավայրեր, կախաղանների մի ամբողջ անտառ, ամէն բոպէ գնդակահարելու պատրաստ զօրք և միևնոյն ժամանակ վարձու տեռորիստների օգնութեան դիմել՝ դա արդէն մի չը տեսնված և անանուն ոճիր է։

Զը պէտք է մոռանալ և այն հանգամանքը, որ տեռորական գործողութիւնը, ինքնըստինքեան մարդասպանութեան մի ակտ լինելով հանդերձ, նոյնպէս իր որոշ էթիկան ունի։ Տեռորի են ենթարկվում ընդհանրապէս այն անձնաւորութիւնները, որոնք իրանց պաշտօնի մէջ եղած ժամանակ մեծ չարիքներ են հասցնում ժողովրդին կամ իրանց հակառակորդներին, նամանաւանդ արիւնարբու քաղաքականութեան հետևելով։ Իսկ երբ այդպիսի մի պաշտօնեայ թողնում է իր պաշտօնը և հեռանում քաղաքական ասպարէզից, այլ ևս ոչ ոք չէ էլ մտածում նրանց տեռորի ենթարկել, որովհետև նա այլ ևս մի անվնաս մարդ է դառել և նրան սպանելը մի ամօթաբեր և անարդարանալի յանցանք է համարվում։

Եւ հէնց տեռորիստական այս էթիկայի տեսակէտից էլ Հերցենշտէյնի սպանութիւնը մի կատարեալ անարդարանալի ոճիր պէտք է համարվի, որովհետև Միխայիլ Եակովլևիչը նախ՝ պետական պաշտօնեայ երբէք չէ եղել ու ոչ ոքի և ոչ մի վնաս իր ամբողջ կեանքում չէր հասցրել։ Նա գիտութեան մարդ էր, զինված միմիայն իր գիտական արգումենտներով, և նրա միակ յանցանքը նրա մէջն էր կայանում, որ, Պետական Դումայի անդամ եղած ժամանակ, իր գիտական ասագին էքսուզիցիայով երևան հանեց Սուխինով-Դուբիչ մինիստրների քաղաքականութեան ամբողջ գիշերը ու վնասակարութիւնը, թէ պետութեան և թէ սովատանջ երիրագործ ժողովրդի համար։ Այդ էր Հերցենշտէյնի միակ յանցանքը, միակ «վնասակարութիւնը»։ Բայց չէ՞ որ Պետական Դուման ցրվելուց յետոյ այդ վնասակարութիւնն էլ արդէն անցած էր, և նա նոյնչափ, դեռ շատ ու շատ աւելի անվնաս քաղաքացի էր դառել, ինչպէս անվնաս են համարվում իրանց պաշտօններից հեռացած Դուրնովօն, Սուխինովին, Դուբասովը և այլ շատ այդ կարգի զարան անձնաւորութիւններ, որոնք դեռ երէկ սրեան հեղեղներ էին տարածում ամբողջ Ռուսաստանում, բայց և որոնց այսօր ոչ ոք տեսօրի ենթարկելու մասին չէ էլ կարող մտածել։

Ինչպէս երևում է, բիւրօկրատիան ու նրա արբանեակները այլ կերպ են տրամաբանում. նրանց համար չը կայ տրամաբանութիւն, չը կայ էթիկա, և նրանք որոշել են անվերջ ոճրագործութիւնների ոյժով պահպանել իրանց գարշելի գոյութիւնը։

Ռ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մոսկվայից, յուլիսի 27-ին)

V

Ամսիս 24-ից, կէսօրից, Մոսկվայում ընդհանուր քաղաքական գործադուլ հրատարակվեց։

Նախ՝ գործադուլ արին տպարանական աշխատաւորները, որոնք, պահանջելով իրանց տէրերից մինչև գործադուլի օրը հաշիւ, շրջում են զբօսավարելով և նշանաւոր փողոցներով։ Շատ տեղերում, ինչպէս օր. Տվերսկայա փողոցում, Պուշկինի մահարձանի հանդէպ, գործաթողների կողմից փոքր ներա «Մարսելիոզ» և այլ յեղափոխական երգեր երգելու, բայց ոստիկանութեան երևումը խափանում էր այդ։

Երկրորդ՝ գործադուլ արին շատ գործարանների բանարներ և էլեքտրաքարշի ծառայողներ, որոնց թիւը բոլոր գործաթողների հետ միասին կազմում է մօտ 80 հազար հոգի։ Զը նայած որ նրանք խումբ-խումբ յանձնում են, բայց իրանց շատ կօրրէկտ են պահում և ամէն կերպ աշխատում են զօրքերի և ոստիկանութեան հետ ընդհարվելուց խուսափել։ Առհասարակ գործադուլը շատ խաղաղ է ընթանում։

Առևտրական ու հասարակական կեանքը իր նորմալ և բնական ճանապարհով առաջ է գնում։ Բոլոր անհրաժեշտ խանութները մինչև ուշ գիշեր բաց են լինում, ուր արագ ու կենդանի առևտուր է նկատվում։

Բոլոր բանկերը, խնայողական դրամարկղները, պետական, պետական և հասարակական հիմնարկութիւնները դրսից և ներսից պահպանվում են զօրքերով և ոստիկաններով։ Աւելի ուժեղ պահպանութիւն կայ կայարաններում, ուր անհամար զինուորներ, ժանդարմներ և ոստիկաններ են գիշերում։ Քաղաքում բոլոր գրատները ուժեղացված են. իւրաքանչիւր պատում կանգնած է 2—3 ոստիկան՝ զինված հրացանով և ատրճանակով։ Երկվանից բոլոր գիշերապահներին, բացի նրանից, որ ունէին հրացաններ, բաժանեցին նաև ատրճանակներ։

Երկաթուղային գծերը, թէև առայժմ կանոնաւորապէս գործում են, բայց երկիւղ են կրում գործադուլից, և շատերը տրամադրված են կարծելու, որ նրանք էլ շուտով կը դադարեն գործելուց։

Առայժմ ձիարքարշը գործում է, բացի էլէքտրաքարշից։ Ո՛չ մի լրագիր լոյս չէ տեսնում. երբեմն լոյս են տեսնում «Новая Мысль» և «Лѣтопись» երեկոյեան թերթերը։ Պետերբուրգի թերթերից տեղս ստացվում են «Новое Время» և «Петербургская Газета» թերթերը, այն էլ ո՛չ լրիւ։

VI

Մոսկվայի բանուորական պատգամաւորների խորհուրդը, որ ընտրված է ամենախոշոր գործարանների և պրոֆեսիոնալ միութիւնների կողմից՝ ամսիս 24-ին մի ժողով ունեցաւ։ Այդտեղ հարց դրվեց թէ ի՞նչ դրութեան մէջ է գործադուլը Մոսկվայում։ Երևաց, որ գործաթողների թիւը 80 հազար հոգու է հասնում։

Ի նկատ ունենալով մոսկվեան կարեորութիւնը՝ ժողովը իր որոշման մէջ ի միջի այլոց ամբողջ պրոլետարիատին խաղաղ գործադուլի է կոչում, միաժամանակ յայտարարելով որ հեռու մնան ամէն տեսակ ակտիվ և վճռական քայլից զօրքերի և ոստիկանութեան վերաբերութեամբ։

Ապա ժողովում հարց տրվեց ջրանցքի, փողոցների լուսաւորութեան, հացթուխների աշխատանոցների աշխատող անգործ բանուորների մասին։

Ժողովը վճռեց ջրանցքի վրա աշխատանքները շարունակել, ի նկատի ունենալով, որ նա բաւական անհրաժեշտ է ազգաբնակութեան համար։ Էլէքտրական և գազային լուսաւորութիւն կը լինի. ի դէպ յիշենք, որ երկու գիշեր քաղաքի փողոցները մթութեան մէջ կորած էին, իսկ այս գիշեր լուսաւորված։ Հացթուխները մնանում են գործադուլին այն պայմանով, որ միայն սև հաց թխեն։ Ինչ վերաբերում է հասարակական աշխատանոցներում աշխատող անգործներին, ժողովը նրանց գործադուլի չէ հրաւիրում, թողնելով այդ նրանց հայեցակէտին։

Բացի այս բոլորից, մամուլի աշխատաւորների միութեան պատգամաւորները հարց դրին այն մասին, որ պէտք է հրատարակվի հեռագիրներ և տեղական քրոնիկոն թէ ոչ։ Ժողովը որոշեց միայն թռուցիկներ բաց թողնել։

Ինչպէս անցեալ անգամ էլ հաղորդել էի, այժմ էլ պնդում եմ, որ ներկայ պայմաններում դժուար թէ ընդհանուր քաղաքական գործադուլ լինի։ Ըստ իրերի դրութեան և պետութեան ձեռք առած կարգադրութիւնների, այժմեան գործադուլը, թւում է ինձ, թէ շուտով կը խեղդվի։

Ցամենայն դէպս մօտ ապագայ ցոյց կը տայ բոլորը...

Ռոկոս-Զօն

ՅՈՒՆԻՍԻ 7-Ի ԿՕՆԴԱԿԸ

IV

Իւրաքանչիւր ընտրվի պաշտօնեայ ստորադիր է իրան ընտրող ժողովին։ Այս տարբերան հիմնական սկզբունքը պէտք է ի նկատի ունենանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կենտրոնական ժողովի և էջմիածնի սինոդի իրաւական յարաբերութիւններն ու փոխադարձ դիրքը որոշելիս։ 14 բողոքող մխարանները, չուզենալով կամ չը կարողանալով այդ պարզ սկզբունքը հասկանալ, զարհուրանքով պընդում էին, թէ յունիսի 7-ի կօնդակը Կաթողիկոսին և սինոդը ստորադիր է դարձնում կենտրօնական ժողովին ու սահմանափակում հայրապետական իրաւասութիւնը։ Մատթէոս վարդապետն էլ իր ձայնը նրանց ձայնին է միացնում, ասելով որ այդ կօնդակը «կամովին (՞) սահմանափակում է Կաթողիկոսի հայրապետական եկեղեցական վարչութեան իրաւունքները»։

Նախ ստորադրութեան ու սահմանափակութեան գաղափարները պէտք չէ շփոթել, քանի որ դրանք տարբեր բաներ են։ Օր. մեզանում ծխական ժողովուրդը ինքն է ընտրում իր քահանային և ո՛չ ոք՝ ոչ առաջնորդը, ոչ Կաթողիկոսը՝ իրաւունք չունի մի ծխական համայնքի մի քահանայ նշանակել, եթէ ծխական ժողովուրդը չէ ուզում։ Արդ, մ՚թէ սրանից հետևում է, որ Կաթողիկոսը այդ դէպքում ստորադրվում է մի ծխական ժողովի. ի հարկէ ոչ. այլ Կաթողիկոսի իրաւունքը այստեղ սահմանափակված ենք տեսնում։ Եթէ այս դէպքում Կաթողիկոսի ստորադրութեան մասին խօսք կարող է լինել, ապա ոչ թէ ծխական ժողովի, այլ եկեղեցական օրէնքի, կանոնի վերաբերմամբ։ Եւ Կաթողիկոսը անտարակոյս ենթակայ է ու ստորադիր եկեղեցական կանոնին, ու նրա իշխանութիւնը սահմանափակված է ու պիտի այդպէս էլ լինի։ Կաթողիկոսը եկեղեցում միապետ չէ։ Մեր հոգևոր բիւրօկրատներին, որոնք իրանց իրաւական և քաղաքական կրթութիւնը ռուսաց անսահմանի ու ինքնակալ ոստիկանութեան դպրոցում են ստացել, ի հարկէ, զուր չի գայ այս բանը։ Նրանք շատ են ուզում, որ Կաթողիկոսը անսահման միապետ լինէր մեր եկեղեցական գործերում, որպէս զի իրանք էլ ազատ հարմանալ, այդ անկօնտրոլ իշխանութեան հովանու տակ, ռուսաց բիւրօկրատիայի նման, իրանց անձնական բաները տեսնէին։ Ցաւալի է, որ բացարձակ միահեծան կարգերը այնքան իրան ինքնակալ միապետին հարիւրաւոր նպաստաւոր չեն, որքան նրան շրջապատող և այդ ինքնակալութիւնը շահագործող շքամարերին և զանազան տեսակի կամարիլաներին։ Եւ Մատթէոս վարդապետը, որը մի քանի ամիս առաջ ինքն էր գանգատվում էջմիածնի կամարիլիայից, այժմ հակառակ է այն կարգերին, որպէսի կարգերը պիտի կընդրեն զանազան կարգի ու տեսակի կամարիլաների ու նեպօտների գաղտագողի և անկօնտրոլ միջամտութիւններ։ Այն ժամանակ կամարիլան Մատթէոս վարդապետի անձնական շահերին էր դիպել. իսկ այժմ, երբ խօսքը ամբողջ ռուսահայի եկեղեցական-ժողովրդական շահերի մասին է, Մատթէոս վարդապետը այլ կերպ է վերաբերվում խնդրին։

Այս. Կաթողիկոսի իշխանութիւնը սահմանափակված է եկեղեցում։ Ըստ կանոնի նա իրաւունք չունի ծխական ժողովրդին քահանայ տալ, եթէ այդ ժողովուրդը չէ ուզում։ Իրաւունք չունի թեմին առաջնորդ նշանակել մէկին, եթէ թեմի ժողովուրդը դրան չէ ուզում. իրաւունք չունի ռուսահայերի ամբողջ եկեղեցական համայնքի եկեղեցական գործերի վարիչ կենտրօնական խորհրդի, այսինքն սինոդի, անդամներ նշանակել, տանց նոյն այդ համայնքի ներկայացուցչի, այսինքն կենտրոնական պատգամաւորական ժողովի համաձայնութեան։ Եւ ոչ միայն եկեղեցու պաշտօնեաներին նշանակելու-արձակելու խնդրում, այլ ընդհանրապէս եկեղեցական բոլոր գործերի կառավարութեան ասպարէզում սահմանափակված է Կաթողիկոսի իշխանութիւնը համայնքի համաձայնութեան պահանջով։ Բաւական է ասել, որ տաճկահայերի եկեղեցական գործերում Կաթողիկոսը ոչինչ չէ կարող կարգադրել տեղական եկեղեցական հասատաւորների հակառակ։ Ատրպատականի թեմի համար պարտադիր են միայն այն կանոնադրութիւնները, որոնք ընդունելի են դատվում թեմական պատգամաւորական ժողովից։ Այս տեսակէտից ռուսահայերի պատգամաւորական կենտրոնական ժողովը ռուսահայերի բոլոր եկեղեցական գործերի կարգադրիչը ու տնօրէնը լինելով՝ եկեղեցական ոչ մի կարգադրութիւն չէ կարող վաւերական ու գործադրելի լինել այս շրջանում առանց այդ կենտրոնական ժողովի հաւանութեան։ Այսպիսով Կաթողիկոսի իշխանութիւնը կենտրոնական ժողովի իրաւասութեամբ սահմանափակված է հանդեսանում։ Բայց Կաթողիկոսին ստորադիր համարել կենտրոնական ժողովին սխալ կը լինէր։

Ուրիշ բան է սինոդի հարցը։

Սինոդը ստորադիր է կենտրոնական ժողովին, նրանից կախված, նրանից հրամաններ ստացող։ Զը պէտք է մոռանանք, որ Կաթողիկոսի ու սինոդի դիրքերը հաւասար չեն. Կաթողիկոսը ոչ միայն ռուսահայոց սինոդի նախագահ է, այլ դրանից անկախ Ամենայն Հայոց Կաթողիկոս է, իբրև սինոդից բարձր կանգնած մի առանձին հաստատութիւն։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևապէս ստորադիր է միայն համազգային եկեղեցական ծայրագոյն ժողովին. իսկ սինոդը ստորադիր է կենտրոնական ժողովին, որ ընտրում և արձակում է սինոդականներին։

Ս. Տիգրանեան

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՒ ՀԱՅ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

ՀՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Իրշադից)

Պետական Դումա ուղարկած մեր պատգամաւորների արդիւնքները կամաց կամաց սկսում են երևալ։

Առաջին պ. Թօփչիբաշեվից։

Պ. Թօփչիբաշեվը Հեռագրական Գործակալութեան ագենտ է և այդ դրութիւնից օգտվելով, հազիւ հազ հասած Պետերբուրգ, մի այսպիսի հեռագիր խրեց. «Ալի-Մարդան բէգ Թօփչիբաշով մահմեդական պատգամաւորի լեզուը, պատիւ յարգվեմ և բացի դրանից ճշմարտութիւնն էլ ոտնակոխ չը լինի։

Կասկած չը կայ, որ կառավարութիւնը պատճառ է Ղարերին։ Սակայն եթէ կառավարութեան ձեռքում խուլիգանութիւն ա նողներ եղել են, պարզ է, որ երկու կողմից էլ եղել են. խուլիգաններ, մէջտեղում խառնակութիւն ձգողներ հայերից աւելի շատ են եղել, քան մահմեդականներից։

Եթէ խօսքը մէկ արել էին, միաբանել պէտք էր որ խուլիգանի մասին ակնարկ անդամ չանէին և կամ, եթէ պիտի անէին երկու կողմի մասին էլ անէին։

Մինչդեռ խորհրդակցութիւնն այնպէս կատարվեց, որ կառավարութեան ձեռքում խուլիգ

Դումայի աչքին, մեր ազգը խայտառակեն, մեր երեսին նեռեն մի անէրա սրատ մինմեր երեսին նեռեն մի անէրա սրատ մինչև մաշ, եւ մենք չունենանք մի կարող, պատասխանը պատրաստ պատգամաւոր, որ տայ իսկոյն նրանց պատասխանը։

Մենք ճանաչում ենք Իսմայիլ-խան Զիատխանովին։ Նա ջանասէր, ազգասէր մի երիտասարդ է։ Սակայն մահմեդական-հայ գործառոյթ հեռու լինելով, անտեղեակ է հայերի ծերից հեռու լինելով, անտեղեակ է հայերի հարցերին և նենգութիւններին։ Իսմայիլ խանին խաբել են։ Նախ նրան են խօսացրել և երբ նա մահմեդականութեան մանին իր անկեղծ խօսքերը ասել վերջացրել են հայերը իրանց սրտի ցանկութիւնները եւ սպասել մահմեդական-հայ հարցերին եւ սպասել մահմեդական-հայ հարցերին։ Ամենայն ուրիշ պատգամաւորներ ունէինք։ Ամենայն համար նրանք լռեցին, ինչու նրանք լռեցին։ Ինչու նրանք դաշնակցական խմբերի էլ ոչոք չը տուեցին դաշնակցական խմբերի կիրպանքը։ Ինչու նրանք թարգմանը չը հանդիպացան մահմեդականների մինչև երկինք բարձրացող լաց ու կոծին։

Արդեօք պ. Թօփչիբաշիվը չէ՞ը կարող, փոխանակ իր լիներութիւնը այդպիսի չքով պարծին ծանուցելու, իր կեանքում գոնէ մի անգամ դէն գցելով «լուութիւնը ոսկի է» առածը՝ ազգի նամուսը պաշտպանելու համար մի խօսք ասել։

Ցիրտ է, մենք այդ պատգամաւորները ընտրեցինք խարդախութեամբ, բռնութեամբ, ինտրիգներով։ Ժամանակին մի հարցում անգամ չը տուեցինք նրանց՝ իրանց համոզմունքների, ապագայ վարմունքի, ծանօթութիւնների մասին։ Նոյնիսկ, ընտրութիւնը կասարելուց, պրծնելուց յետոյ, երբ Մերոմամադ-Հասան Հաշինսկին հարց տուեց ժողովին։ «Աւար ինչ է քո համոզմունքը, քո պրոգրամը, մեր պատգամաւորը կասարեալ հպարտութեամբ և զուարթութեամբ պատասխանեց։ «Ես անչափ ուրախ եմ, որ իմ ընտրողների մէջ էլ կայ այդ հարցին կասկածութիւն ընծայող անձ»։ Մենք ուշադրութիւն չը դարձրինք, թէ որ տատիճան վիրաւորական էր այդ պատասխանը։ Բայց նրանք թող հաւատացած լինեն։ Մենք նրանց էժան չենք նատեցնի։ Ազգը միշտ զգաստ կը լինի նրանց գործերին և վարմունքներին։ Մենք նրանց թոյլ չենք տայ, որ Ատուծոյ և չէլեանի միջև տատվելով լաւ ու պատանվաց մնան։ Կամ թող բացէ ի բաց ազգի հաւատարիմ ներկայացուցիչներ լինեն, անպարարութիւնից ձեռք քաշելով ազգի նամուսը և պատիւը պաշտպանեն և կամ թող գնան և իրանց գործերով ու անձով զբաղվեն։

«Արշաղ» Բագուցի ընտրող «Արշաղ»-ի աշխատակիցը, յարձակվելու համար պ. Թօփչիբաշիվի և մասամբ Զիատխանովի վրա, խեղութիւրում է փաստերը, Դումայի նեռներից հանելով այդպիսի եզրակացութիւն, որը ոչ որի մտքից չէր անցնում։

Պատգամաւոր դառնալու փափագը շատ բնական, շատ օրինաւոր է։ Բայց Դումայում տեղ բանալու համար, ժողովրդի շահի անունով խօսել, զրգռել նրա դիւրաբորբոք լարերը գտնում ենք միանգամայն դատապարտելի։

Լաւ է, որ այս յօդուածը կարդան հայ և թուրք պատգամաւորները, համոզվելու համար թէ ինչ գիր է ուզում կատարել «Արշաղը»...

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

III

Եկեղեցական սրբազնագործ պաշտօնեաներ

—

Եկեղեցի՝ իբրև հաւատացեալների ժողով, համայնք, ունի իր կարիքները, ունի իր հոգեվիճները։ Ժողովը, համայնքն է իր հաւատաքանօրէն գաւանած աւետարանական սկզբունքների ըմբռնողութեան համեմատ ասնամում աշխատանքի բաժանումներ, և սրանց համեմատ հատատում այլ և այլ պաշտօնեաներ։

Եկեղեցական ամբողջ աշխարհի բարեգործութեանը ծառայելու պարտական է ամեն մի անդամ։ Աշխատանքը, որ դարձնելու է այդ աշխարհը բարեկեցիկ, պայծառ, կենդանի դրախտ, բաղկացած է այլ և այլ մասերից։ Այս մասերը հաւասարապէս անհրաժեշտ են և պիտանի։ Իւրաքանչիւր մասի համար կարգված-ընտրված պաշտօնեայ պատիւ պիտի համարել իրան համար ժողովրդի հրաւէրով, ժողովրդի ձայնով եկեղեցուն սպասաւորելը։

Անհատական կամքը չէ, որ պիտի իշխի, դեկավարի և իր կամեցածի պէս գործի եկեղեցու մէջ, այլ համայնքի, ժողովրդի, հոգեւորութեան հաւաքական կամքը, հոգին է, որ ամեն մի պաշտօնեայի, ամեն մի սպասաւորի վրա պիտի հսկի, տիրի ու թելադրի։

Այս պաշտօնեաներից, այս սպասաւորներից կան այնպիսիները, որոնք պիտի յատուկ օրհնեմ, ձեռնադրութիւն, հոգևոր ատիճաններ ունենան, կան և այնպիսիները, որոնք պաշտօն են ընդունում առանց այդ պահանջների։

Առաջին տեսակի պաշտօնեաները կոչվում են սրբազնագործներ և են քահանաները, եպիսկոպոսները և կաթողիկոսները։

Սրանցից առաջինները՝ քահանաները պաշտօն ու պարտաւորութիւն ունեն իրանց ծխական եկեղեցու մէջ սրբազնագործութիւն կասարելու։ Եպիսկոպոս առաջնորդները իշխանութիւն ունեն իրանց թեմի համար քահանաներ ձեռնադրելու և սրանց սրբազնագործական պաշտօնասարութեան վրա հսկելու։ Կաթողիկոսները իշխանութիւն ունեն եպիսկոպոսներ ձեռնադրելու, միւռոն օրհնելու և ընդհանրապէս ամբողջ եկեղեցու գաւանաբանական-արարողական հոգևոր աշխարհը կառավարելու համար ձայն ազգի ժողովական որոշումների և համաձայն գրած կարգ ու կանոնների։

Ձեռնադրութիւնից առաջ պիտի լինի ընտրութիւն։ Քահանայացուն ընտրվում է եկեղեցու ծխական ընդհանուր ժողովի կողմից, այլ ոչ բնաւ այս կամ այն ինչ մեծնող քահանայի ծիսի կողմից։ Ծուլիը քահանայինը չէ, այլ եկեղեցունն է։ Իւրաքանչիւր հայ ծերխական է այս կամ այն եկեղեցու, այլ ոչ բնաւ այս կամ այն քահանայի։ Ուստի և քահանական բաց տեղի համար ծխական եկեղեցին է միաբանօրէն ընտրում և ոչ մի մարդ, ոչ կարող է շատ դիւրութեամբ այլ և այլ երկպառակութիւններ դուռ բանալ, ինչպէս թեան մէջ գցեց։ Անառնելի էր այն խոշոր և բացում է։ Ծխական ժողովի կողմից ընտրված ընծայացուն է, որ ձեռնադրում է թեմի եպիսկոպոսը և իր օրհնութեան թղթով կարգում քահանայ նրան ընտրող եկեղեցու-ժողովրդի վրա։

Այսպէս և թեմական ժողովուրդն է ընտրում եպիսկոպոսացուն կամ առաջնորդացուն և այն թեմի կողմից ընտրվածին է, որ կաթողիկոսը եպիսկոպոսական աստիճան է տալի և իր օրհնութեան կօնդակով կարգում առաջնորդ այն թեմի վրա։

Սոյն ձևով և ամբողջ հայ եկեղեցին է ընտրում իր հայրապետացուն և նոյն ժողովրդի կողմից ընտրված առաջնորդ եպիսկոպոսների խմբական ձեռնադրութեամբն է, որ նա ամբառնում է հայրապետական աթոռի վրա իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Սրբազնագործ պաշտօնեաների եկեղեցու սպասաւորութեանը կոչվում էական պայմանը եկեղեցու-ժողովրդի կողմից ընտրվելն է, իսկ ձեռնադրութիւնը պաշտօնի մէջ մանելու, պաշտօնին տիրանալու ձևական արտայայտութիւնն է։

Ամենայն մի ընտրեալ պաշտօնեայ պատասխանատու է իրան ընտրողների առաջ։ Ծխական ընդհանուր ժողովից ընտրվա՝ քահանան պատասխանատու պէտք է լինի իրան ընտրող ծխական ընդհանուր ժողովի առաջ, թեմի ժողովրդի կողմից ընտրված եպիսկոպոս-առաջնորդը պատասխանատու պէտք է լինի իրան ընտրող թեմական ժողովրդի պատգամաւորական ժողովի առաջ, ինչպէս և ազգի կողմից ընտրված հայրապետը պատասխանատու պէտք է լինի իրան ընտրող ազգային ժողովի առաջ։

Քահանան, եպիսկոպոսը և հայրապետը պարտաւոր են ընթանալու աւետարանական վարդապետութեան հոգով և ազգային ժողովներով սահմանված կարգ ու կանոններով իւրաքանչիւրն իր սահմանների ու շրջանների մէջ։

Ժողովրդական եկեղեցին առանձին հոգևորականներից բաղկացած ժողով-իշխանութիւն չէ կարող տանել և հանդուրժել։ Ժողովրդական եկեղեցու ամեն մի անդամ հաւասարաչափ աշակերտ ու հետևող է Քրիստոսի աւետարանին։ Աւետարան կարդալ մեկնել և աւետարանական պատուէրներ կատարելը պատկանում է ամենքին հաւասարապէս։ Ուստի և հաւասարութեան հիմունքների վրա հաստատված եկեղեցին չի կարող ներել, որ մարդկանց մի առանձին դասակարգ հանդէս գայ մենաշնորհ մեկնող, դատակարգչէն լուսաբանող և իր մեկնածների ու լուսաբանածների համեմատ հրամաններ ու հրահանգներ արձակող հաւատացեալ ժողովրդի հոգ բազմութեանը։ Սա կը լինէր ժողովրդի կողմից իր իրաւունքների ընդհանումն, ինքն իրան անքան հօտի հաւատարացումն։ սա կը լինէր աւետարանական հաւասարութեան երկնային սկզբունքի խախտումն, որ յատուկ է կրօնական եկեղեցիներին։

Այս հիմնական դրութեան իբրև հաւատարիմ եղբայացութիւն կը լինի այն, որ եկեղեցու ընտրված պաշտօնեաները, լինեն նրանք սրբազնագործ թէ սոսկական, պարտաւոր են հրահանգվելու իրանց ընտրող ժողովների ցուցմունքներով և ամենքը միասին ստորագրված են ազգի միաբանութեան արտայայտված կամեցողութեանը ու մտածողութեանը։ Որ պաշտօնեան որ չափով որ դուրս գայ այս անքարեկի պայմաններից ու թեակոխի ժողովրդական կամեցողութեան վրա ընտրելու սահմանները, այնքան նա դաւաճանում է իր եկեղեցու ժողովրդական-աւետարանական եղբայրութեանը և հանդիսանում է ընտաւոր, կամապաշտ ու հակաւետարանական։ Ժողովրդական եկեղեցին չէ կարող ոչ միայն յարգել, մեծարել, պատել այդպիսիներին, ոչ միայն աչք գոցել դրանց առաջ, չէ կարող այլ և չը պատժել, միջոցներ չառնել դրանց ընթացքը խափանելու։ այլապէս իր անտարբերութեամբ ինքը ճանաչարէ հարթած կը լինի կղերի առաջ գալու և կազմվելու։

Եթէ մինչև այսօր մեր հոգևորականները իրանց ձեռքի մէջ են ունեցել և՛ եկեղեցական խնդիրների կարգադրելը, և՛ այլ և այլ պաշտօնները, և՛ զբաղութիւնը, և այլն, պատճառը ժողովրդի ոգեւորութիւնն է եղել։ Ժողովրդի մէջ հասարակական պարտաւորութիւնները կատարող պատրաստ ժողովրդի չենք եղել։ Ամենն բան ծանրացել է հոգևորականի վրա ոչ թէ որպէս հոգևորական այլ որպէս համեմատաբար աւելի կարող անձի վրա։ Այժմ, երբ ժողովուրդը կարող է իր միջից հանդէս հանել այլ և այլ աշխատանքների համար կարող ու գիտուն անձեր, ինքն ըստ ինքեան պարզ է, որ պիտի հոգևորականի ուսերի վրայից ազնէ այն ամենը, ինչ որ չէ մտնում նրա՝ հոգևորականի՝ իբրև սրբազնագործ պաշտօնեի՝ անմիջական պարտաւորութիւնների մէջ։

Այսպիսով քահանաներին կը մնայ եկեղեցու մէջ ժամասացութիւններ ծխական արարողութիւններ կատարելը, առաջնորդներին ու կաթողիկոսներին զուտ սրբազնագործ խնդիրների մեկնելը բաց աւետարանական ու ժողովական սահմանումների և քահանաների և այլ պաշտօնեաների վրա անմիջական հսկողութիւնն իրանց հովութեանը յանձնված շրջաններում, իսկ եկեղեցու մնացած մասերը՝ անտեսական, վարչական, դատաստանական և բարեգործական կանգնեն եկեղեցու սոսկական պաշտօնեաներին այն զանազանութեամբ, որ եկեղեցու սոսկական անդամները չեն ունենալ իրաւունք սրբազնագործութիւններ կատարելու, այն ինչ սրբազնագործ անդամները՝ հոգևորականները կարող են եկեղեցու այլ և այլ հատատութիւնների մէջ պաշտօնեներ վարել, եթէ դրանց համար կունենան արժանաւորութիւններ և եթէ իր յատուկ քուէներով, իր ձայնով կը հրաւիրէ ժողովուրդը։

Մեսրոպ ա.-ք. Մելիան

Բաթում

ՆԱՄԱԿ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴԻՑ

—

Յուլիսի 22-ին

Ռուսատանի խառնակ դրութիւնը և դրանից առաջացած զանազան քաղաքների անկարգութիւնները ահ ու դողի մէջ էին գցել Նիժնի-Նովգորոդի ժուռավաճառը եկող խոշոր և մանր առևտրականներին։ Իսկ վերջին օրերս կատարված սոսկալի ակտը—Պետական Դումայի արձակումը—դրանց աւելի ևս շփոթեցրեց և վերին ատիճանի անորոշ դրութեան մէջ գցեց։ Անառնելի էր այն խոշոր ֆիրմաների դրութիւնը, որոնք իրանց ապրանքները առաջուց ճանապարհել էին և սպասում էին ժողովաճառի բացմանը, որ իրանք էլ ճանապարհվին, երբ հեռագիրը գուժեց Պետական Դումայի արձակումը, որը և մի առժամանակ այդ վաճառականներին յետ կանգնեցնել տուեց ժողովաճառը գնալու վճռից։ Այդ էր պատճառը, որ յուլիսի 15-ին, ժողովաճառի բացման օրը, երբ սովորաբար մաղթանքը կատարելուց յետոյ հանդէսով բարձրացում են դրօշակները և ժողովաճառը յայտարարվում է պաշտօնապէս բացված, և երբ նոր նոր սկսվում են բացվել խանութները և առ հասարակ նկատվում է կենդանութիւն, ահա այդ օրը, ասում եմ, համարեա թէ եկեղեցիները չը կային, այլ մեծ մասը տեղացի ռուսներ էին և եղածների երեսին էլ նկատվում էր մի տեսակ յուսահատութիւն։

Բայց անցան այդ վախի օրերը և սկսեցին քիչ-քիչ մարդիկ երևալ զանազան կողմերից։ եկածները երբ համոզվում էին, որ ամեն ինչ խաղաղ է և ոչինչ էլ չէ սպասվում, իսկոյն հեռագրում էին զանազան ֆիրմաների և յայտնում տիրող խաղաղութեան մասին։ Այժմ ժողովաճառը ընդունել է իր սովորական ձևը։ բացվել են խանութները, և շոգենաւերը ու երկաթուղիները ամեն օր զանազան կողմերից բազմաթիւ մարդիկ են բերում։ Այս տարի ապրիլյանից քիչ են նկատվում հրէաները թեև և շարունակ գալիս են հայեր, մանաւանդ պարսկատանցիներ։ Ընդհանրապէս աչքի է ընկնում մի բան, որ եկողները աշխատում են շատ մի քանի օրվայ մէջ վերջացնել իրանց գործերը և անմիջապէս գնալ։ այդ երևույթը ի նկատի ունենալով ժողովաճառը երևի այս տարի կը դատարկվի սովորականից առաջ։

Այս օրերս բացվելու է այստեղ գոյութիւն ունեցող Ֆիզնէրի թատրոնը, որտեղ ի մէջի այլոց գատրօլների հրաւիրած են Ռուսատանի առաջնակարգ ոյժերից՝ Շալեապին, Սոբինով, Մակակով և այլն։ Բացի օպերայից կան դրամա, օպերետա, Նեկիլանի ցիրկը և բազմաթիւ բնատաբանութիւններ իրանց բաց բեմերով, որտեղ ամեն գիշեր հազարներ են թողնում մեր երկաստանները։ միով բանիս ժողովաճառը իր անբարոյականութիւնով սոսկալի տպաւորութիւն է թողնում մարդու վրա, մանաւանդ որ այս տարի այստեղ եկող վաճառականները խնդրամատոյց են եղել այստեղի կոմիտէից, որ թոյլ տան բնատրանները բաց երգչախիներ ունենալու, որի տեսքով անա այս օրերս ժողով պէտք է գումարվի, և հարցը դրական լուծվելու դէպքում՝ տիրող անբարոյականութիւնը երևի կը կրկնապատկվի։

Անշուշտ երևի վախեցրից ժողովրդին նաև մօտ ժամանակներումս պատահած Սիբրան քաղաքի ահռելի հրդեհը, որին համարեա ամբողջ քաղաքը զոհ գնաց։ պատմում են, որ այդ հրդեհի ժամանակ, ի մէջի այլոց, պատահել է հետեւեալ գազանային դէպքը։ երբ հրդեհը սկսում է մօտենալ նաւթի կաթսաներին, այստեղ կանգնած մի ուսանող զգուշացնում է ժողովրդին, ասելով որ հրդեհը մօտենում է կաթսաներին, հեռացէք եթէ ոչ կրակի զոհ կը դառնաք բոլորդ։ բայց ժողովուրդը հաւատ չէ ընծայում ուսանողի խօսքին և մի քանի րոպէից յետոյ՝ կաթսաները տաքցում են և ժողովրդից շատերը այրվում։ դրանով ապացուցվեց այդ դէպքը բացատրում է նրանով, որ ուսանողը իբր թէ ուզում է նեռել կրակի մէջ, որից և առաջացել է պայթունը, և բռնելով անմեղ ուսանողին կենդանի գցում են կրակի մէջ, որը և ոտրատիլի տանջանքներ կրելով այրվում է։

Ճանապարհորդ

ՄԱԾՆԻ ՄՆԴԱԿԱՆ ԵՒ ԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆը

—

«Կավկազ» ներկայ տարվայ № 119-դի մէջ մենք տպել ենք մի յօդուած հետեւեալ վերնագրով՝ «Значеніе кислаго молока по Мечникову», որի նիւթը այնքան հետաքրքիր է, որ մենք կարեոր համարեցինք նրան եւ հայերէն տպագրել անշան կրճատումներով *)։

Մօտերս հռչակաւոր Մեչնիկովը տպագրել է մի փոքրիկ գրքոյկ-բրօշիւր—Quelques remarques sur le lait aigri»—մի քանի նկատողութիւններ մածնի մասին, որի մէջ խօսում է մածնի թէ սնդկական և թէ բուժական նշանակութեան մասին ազիքների զանազան խանգարմունքների դէմ։ Բացի գրանից՝ պրոֆ. Մեչնիկովը մածունը համարում է շատ օգտաւէտ ծերութեան դէմ, որը նա բացատրում է նրանով, որ մարդու ազիքների մէջ գոյանում են թոյներ—օտիսիներ և պուտրին (птомаинъ), որոնք մտնում են մեր արեան և ուիշի (лимфа) մէջ։ Իսկ այդ թոյները գոյանում են նրանից, որ ազիքների մէջ՝ շուրջը բազմաթիւ միկրօբների՝ տեղի են ունենում նեխումն կամ խմորումը — броженіе կաթնաթթուային—молококислое, իւղաթթուային—маслянокислое, նեխային—гнилостное, ճանճային—болотное և այլն. ահա և այդ ժամանակ էլ գոյանում են վերոյիշեալ թունաւոր թոյները։

Այդ օրգանիկական թոյները՝ տարածվելով մեր կազմուածքի մէջ՝ ազդում են վնասակար կերպով նրա ուղեղ, աւելի քնքոյշ և կեանքի համար կարեոր էլեմենտների վրա, օրինակ՝ ուղեղի, զեղձերի, մկանների. նոյն ազդեցութիւնը չէ լինում կազմուածքի կոպիտ միաւորէչ ոսկրային վանդակների (գնդակաձիրների) և փաղոցիտների վրա (фагоциты)։ Անա այս վերջինները՝ աւելի զօրեղ լինելով՝ յաղթում են ասնիս էլեմենտներին, ատիճանաբար թուլացնելով և ոչնչացնելով նրանց, և դրանով կազմուածքը սառնում է թուլութիւն, կենսական զգօնդութիւնների նուազումը, միով բանիւ՝ ծերանում է։

Պէտք է ի նկատի ունեցած, որ նորածնի ազիքներում սկզբում չէն լինում միկրօբներ, բայց նրանք մտնում են ազիքների մէջ թէ օդի հետ և թէ եռեւեց. բայց յետոյ այնքան շատանում են, որ նրանց թիւը մարդու ազիքների մէջ հասնում է անթերեակայելի քանակութեան՝ 135 տրիլիոնի։ Փորձը ցոյց է տալիս, որ ազիքներում խմորումը—броженіе կախված է կերակրի տեսակից և նեխամանումի—гнилостное броженіе, միկրօբները կենսագործ են լինում թթու շրջավայրում. անա ինչու զանազան սնունդական նիւթեր պահում են քացախի մէջ։ կաթը թթվում է նրա մէջ գոյացող կաթնաթթուային խմորումից, կաթնամիկրօբների ազդեցութեամբ շարքի վրա, որից գոյանում է և կաթնաթթուա, իսկ այդ թթուտից կաթը մակարդվում է՝ դառնալով մածուն, զանազան տեսակ պանիրներ։ Մածունը ոչ միայն շուտով չէ ենթարկվում նեխման՝ չնորհիւ նրա մէջ գտնվող կաթնաթթուատի, այլ պաշտպանում է նեխումից նրա մէջ դրած թարմ միսը։ Եթէ այդպէս է, նշանակում է կաթնաթթուային խմորումը կարող է պակասեցնել նեխային խմորումը ազիքներում, որը ապացուցված է՝ նեղսը ընդունելով մեծ քանակութեամբ կաթնաթթուներ։ Եւ նեխման պակասումը երևացել է նրանով, որ մէջի մէջ պակել են ինդիկան—индиконъ և զանազան թթուատներ, որոնք յայտարարիչներ են ապիրատային նիւթերի նեխման ազիքներում։

Բժիշկ Colendy թէ իր և թէ կենդանիների վրա փորձեր է արել վերոյիշեալը հաստատելու համար, 1) ընդունելով իսան կերակուր, 2) զլխաւորապէս մսեղէն, 3) միայն կաթ—մէկ լիտր—4 թէյի բաժակ, աւելացնելով բոլորական կաթնաթացիներ, որոնք ստացվում են բոլորական մածնից և համարված են ամենազօրեղը։

Այժմ թէկ կաթնաթթուատը իբրև բուժական միջոց գործ է դրվում ազիքների խանգարման դէմ, բայց նա՝ որովհետև շուտով այրվում է, այդ պատճառով չէ կարող փոխարինել ոչ մածնին, ոչ կաթնաթթուային բացիլներին, մանաւանդ մածնին, որի գործողութիւնը տեւում է բաւական երկար։

Ինչպէս մածնի մէջ, նոյնպէս կէֆիրի, կումիսի, բոլորական եղուրտի—ягуртъ, եղիպտական լէբէնի—лебенъ մէջ այլն, բացի կաթնաթացիներից, գտնվում են և այլ ֆերմենտներ, անա ինչու պրոֆ. Մեչնիկովի մէջ յրպտի է միտը պատրաստել մածունը միայն կաթնաթացիների միջոցով, որոնք ընդունակ են միայն կաթնաթթուային խմորում առաջացնել։

Բաւական է կաթը լաւ եփ տալ և նրա մէջ ցանել կաթնաթացիներ, յետոյ կաթը դնել մի քիչ տաք տեղ, ինչպէս սովորաբար պատրաստում են մածունը։ Մեչնիկովը առաջարկում է մածունը պատրաստել երեսը քաշած եփված կաթից, որպէս զի իւղը քիչ լինի նրա մէջ, երբ հարկատրվում է երկար ժամանակ գործածել մածունը։ Այդ տեսակ պատրաստած մածնի մէջ պարունակվում են 10 գրամմ—մէկ լիտրի վրա կաթնաթթուատ, 30% պեպտոնացած կազէին—пептонизированный казеинъ—նշանակում է սպերսը ենթարկված է այնպիսի փոփոխութեան, որ գիւրութեամբ ներմուծվի կազմուածքի մէջ և 68% մինեռալական ազիր—կիրավոսփատներ և այլն։ Ըստ Մեչնիկովի՝ ամենօրեայ գործածութեամբ 500—700 գրամ կամ 2—3 բաժակ մածնով կարելի է կանոնաւորել ազիքների գործունէութիւնը և բարելաւել կերպիս ապրել երիկամունքների արատաթորութիւնների վրա։

Մածունը՝ բացի նրանից, որ շատ բարեբեր է առողջների համար, բուժարար է զանազան անդառուութեան խանգարումների, միզարատաթորութեան և մինչև անգամ բազմաթիւ կաշուի հիւանդութիւնների դէմ։

Մեչնիկովը ինքն է պատրաստում մածունը իր ձեռքով իր համար։ Նա ասելով՝ նրա բազմաթիւ բարեկամները, որոնք հիւանդ էին ազիքների և երիկամունքների հիւանդութեամբ, հետևելով նրան, չափազանց երախտագէտ են դէպի իրան։

Այժմ Պարիզում կազմվել է ակցիոնէրական ընկերութիւն թէ կաթնաթացիներ և թէ մածուն պատրաստելու համար, որը կոչվում է «Le Ferment» և նրա աշխատանոցում՝—лабораторія Պաստէօրի հիմնարկութեան բժիշկների հսկողութեամբ պատրաստվում է արտադրութիւն, որը կոչվում է «լակտոբացիլին», որը առանձին զմած խողովակներում են լինում կամ փոշի նման մածուն պատրաստելու համար կամ պիլիւլների պէս և այդ ձևով պահվում են առանց փչանալու։ Այդ միջոցներով օգտվել են ֆրանսական շատ բժիշկներ Տօնկինում արնաբուծի և զանազան լուծմունքի դէմ, որոնք սովորական միջոցներով չէին բուժվում, և շատ մեծ աջողութեամբ։

Ապացուցված է, որ այնտեղ, ուր ազդաբնակութիւնը մեծ չափով է գործածում մածունը, այնտեղ երկարակեցութիւնը աւելի է լինում։ Բժիշկ Montennes մածունը համարում է «երկարակեցութեան էլէքսիր»։ Մածունը ամենատարածված մնունդն է ամենի երկրում, մանաւանդ տաք երկրներում։ նրա մասին ակնարկ կայ Աստուածաշնչում անգամ։ Մեզ մօտ նոյնպէս շատ տարածված է մածունը և գիւղական ազգաբնակութեան ամենասիրած կերակուրն է, որը գործ է ածվում զանազան ձևով, իբրև լոկ մածուն, իբրև փրբուշ-մածուն խառնած ջրի, վարունգի հետ, ինչպէս окрошка, իբրև թանապատ։ Գիւղացիք համարեա կաթը չեն գործածում, բացի երեխաներից։ նրանք գերադասում են մածունը։ Մենք ցանկանալով վերոյիշեալ «Ferm.» ընկերութեան պատրաստած բաներից գործադրել այստեղ, արդէն խնդրել ենք «Кав. товарищ.»-ից բերել տալ։ Ինչպէս Մեչնիկովը ասում է, նրա ձևով պատրաստած մածունը համարեա մարդկութեան համար մեծ նշանակութիւն ունի, որովհետև ով չի կամենայ ուշացնել իր ծերութիւնը։

Բ.Ժ. Բ. Աղասարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 2-ին

Մոսկու եկեղեցում յուլիսի 30-ին կատարված ընտրութիւնների առիթով «Ալիք» լրագրի հաղորդած մի շարք սուութիւնների դէմ հարկեմ համարում բացատրութիւն տալ թէ իբրև ժողովի նախագահ և թէ իբրև մասնաւոր անձն։ Նախ «Ալիքի» բոլոր ասածը, թէ իբրև մշակականները ամեն տեղ կազմակերպվել են և պարտութիւն կրել, հրէշաւոր սուտ է։ Ակնայայտնի իրողութիւն է, որ թէ Ներսիսեան գրոցի հոգաբարձական ընտրութիւնների և թէ ներկայ ընտրութիւնների ժամանակ ոչ միայն մշակականները չէն կազմակերպվել, այլ և առնասարակ չէ եղել ոչ մի կազմակերպված կուսակցութիւն, գործող Դաշնակցութեան դէմ։ Դրա ապացոյցը կարելի է տեսնել նոյն իսկ «Ալիքի» մէջ։ Վանքի եկեղեցում ընտրողների թիւը եղել է 125 և դաշնակցական թեկնածուները ստացել են 121 ձայն. պարզ է, որ բոլոր մասնակցողները եղել են դաշնակցական. եթէ այդտեղ գործում լինէր որ և է «բլոկ», ըստ «Ալիքի», բաղկացած կղերականներից, բուրժուաներից և սոցիալ-դեմոկրատներից, նրանց թիւը 4 չէր լինիր։ Նոյնը համարեա և բոլոր միւս եկեղեցիներում, ուր ընտրութիւններին մասնակցում էին զրեթէ բացառապէս դաշնակցականները, այնպէս որ ոչոքի հետ պայքար մղելու առիթ չը կար։

Միայն 2 եկեղեցիներում—Զգրաշէնի և Մաղնու—մի խումբ ծխականներ որոշել էին (այն ևս վերջին շաբաթում, երբ Դաշնակցութիւնը վաղուց սկսել էր իր պրոպագանդան և տարածել թռուցիկները) մի քիչ կազմակերպվել։ Եւ այդ կազմակերպվելը կայացել էր նրանում, որ մի քանի ծանօթ ծխականների պատասխան ժամանակ յորդորել էին գալ մասնակցել ժողովին և հրատարակել էին մի կոչ, բացատրելով թէ ինչ սկզբունքներով պէտք է զեկավարվեն ծխականները ընտրութեան ժամանակ։ Այդ կոչը, որ ցրվեց միայն կիրակի, ընտրութեան օրվէին, քաւական ուշ, որ ժողովուրդը սթափվել և իր քուէն չը տայ դաշնակցականներին, նոյն ժողովուրդը, որ դեռ մի ամիս առաջ իր քուէն չէր գլացել նրանց։

Զգրաշէնում ևս, եթէ դաշնակցականները դիտմամբ վերաւորած չը լինէին բժ. Ստեփանոնին և ստիպած նրան հեռանալ և նրա հանկից զուրս եկած չը լինէին մօտ 80 ծխականներ, անկասկած, յաղթութիւնը ոչ-դաշնակցականների կողմը կը լինէր, որովհետև 80—85 ծխականների եկել գալուց յետոյ մնում են մօտ 70 ծխականներ. որոնց մի մասն ևս, 15—20 հոգի ոչ-ծխականներ։

Մաղնու և Զգրաշէնի օրինակները ցոյց տուին, որ բաւական է նոյնիսկ ամենափոքր չափով կազմակերպվել, առանց առանձին ջանքերի, որ դաշնակցականները ամեն տեղ պարտութիւն կրեն, որովհետև նրանք չունեն իրանց եռանում գիտակից ժողովուրդ այլ լոկ խուժան, որին առաջնորդում են խուժանապետները զանազան սպառնալիքների և խոստումների ազդեցութեամբ։

Կատարեալ սուտ թիւն է և այն, որ ես իբրը զրկել եմ ձայնի իրաւունքից 7 ծխականներից։ Երբ քուէարկութիւնը արդէն վերջացել էր, ժամը 3-ին ինձ մօտենում են 2 պատանիներ և խնդրում թոյլատրել իրանց քուէ տալ։ Տեսնելով որ նրանք 21 տարեկան չէ կան և չը գտնելով նրանց անունները ծխականների մատեանի մէջ, ես պատասխանեցի. «Դուք ծխական չէք. վերջապէս, ինչու այսքան ուշ էք գալիս»—«Ուշ ենք գալիս այն պատճառով, որ մենք Զանգի եկեղեցումն էինք քուէ տալիս»—պատասխանեցին ինձ պատանիները։ Պարզ է, որ զրանից յետոյ ես չէի կարող թոյլ տալ նրանց քուէարկել։ Շատ ափսոսում եմ, որ ես այդ փաստը արձանագրութեան մէջ մտցրնել չը տուեցի, իբրև ընդունված։

Մի ուրիշ ինսինուացիա—«Ալիքը» ինսինուացիաների մէջ դափնեայ պակը կարող է տատանվել—ևս այն է, որ իբր «Մշակի» ամբողջ խմբագրութիւնը, բացի Քարանթարից, եկել էր Մոսկու։ Որպիսի տարութիւն Մոսկու գնացել էինք ևս, պ. Տէր-Մարկոսեանը և պ. Ռ. Խանազատեանը, երեքս էլ ծխականներ այդ եկեղեցու տասնեակ տարիներից ի վեր։ Բայց ճշմարտութիւնն այն է, որ Մոսկու էին եկել «Ալիքի» ամբողջ գրոնը, բացի Ս. Աւարտեանից. այստեղ էր, ինչպէս կը վկայեն բազմաթիւ ականատեսներ, և Դիշինսկի-Թոփչեան և Լ. Նարդարեան, և Փամբուխեան, Գուլբենկեան և սրանց նման երևելի հեղինակութիւնները, չը նայելով որ սրանցից ոչ մէկը ծխական չէր։ Ի հարկէ այդ մասին խոնեմաբար լռում է «Ալիքը»։

Գալով, թէ ով է ընտրված՝—Յ. Մանանդեան թէ Ս. Շեխան, ես առաջ կը բերեմ երկուսի տասցած քուէները, և թող հասարակութիւնը ինքը դատէ։ Մանանդեան, բացակայ, ստացել է 64 սպիտակ, 53 սև, Շեխան ստացել է 63 սպիտակ և 52 սև, բայց ինքն իրան սպիտակ քուէ է տուել, (ուրեմն նա ստացել է խլապէս 62), ինչպէս և պ. Լիսիցեանը ինքն իրան սպիտակ քուէ էր տուել։ Քաէարկողների թիւը եղել է 122. ով է ընտրված. թող այս պարզ հարցը լուծի «Ալիքի» մեծիմաստ խմբագրութիւնը։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, օգոստոսի 1-ին, Փոխարքան Թիֆլիսից ուղեւորվեց Կօջոր։

—

Կովկասի ոստիկանութեան կառավարիչ Շերբինինը հրաժարական խնդիրը է ներկայացրել, որը, ինչպէս լսում է, արդէն ընդունված է։

—

Թիֆլիսի նահանգական դատարանը պատասխանատուութեան է ենթարկել 1039-դ յօդուածի համաձայն «Շարքի Բուռի» խմբագիր Մանէպ-ագա Շախատախունդովն. դատարանը արդիւնք է նրան իր ընակութեան տեղից չէ հեռանալ մինչև գործի վերջանալը։ («Ճ»)։

—

Յուլիսի 31-ին Բագուում, Արմեանսկի փողոցի վրա, առաւօտեան մօտ ժամի 10-ին, հրացանաձգութեան ձայն է լսվել։ Սարսափահար ժողովուրդը սկսել է փախչել զանազան կողմեր։ Դէպքի տեղի մօտ գտնվող մի քանի խանութներ անմիջապէս փակվել են։ Պարզվում է հետեւեալը։ Արմեանսկի փողոցում կանգնած պահապան զինուորը, լսելով հրացանի ձայնը, ընկել է փախչող թուրքի հետից և համազարկ է պարզում։ Զինուորը հետևում է նրան մինչև Ալորսկոյսկայա և Բալախանսկայա փողոցների անկիւնը, ուր փախչող թուրքը մտնում է մի պտրսկատանցու խանութ։ Նրա հետից ընկնող զինուորն էլ մտնում է նոյն խանութը և ձերբակալում է խանութի տիրոջը։ Այդպիսի ծխական չէր։ Ի հարկէ այդ մասին խոնեմաբար լռում է «Ալիքը»։

Գալով, թէ ով է ընտրված՝—Յ. Մանանդեան թէ Ս. Շեխան, ես առաջ կը բերեմ երկուսի տասցած քուէները, և թող հասար

նաւոր ձեռքով և խնդիրը ամբողջաւոր հանի։ («Прав. Вѣст.»)

—

Պետերբուրգի կանոնց բարձրագոյն դասընթացներում առաջիկայ աշնանից բացվում է իրաւաբանական ֆակուլտետ։ Ունկնդիրների ընդունելութիւնը կը կատարվի ընդհանուր հիմունքներով, այն պայմանով միայն, որ յիշեալ ֆակուլտետում ընդունվողները, ուսումնական տարվայ վերջում, լատիներէն լեզուից քննութիւն տան։ («Прав. Вѣст.»)

—

Գալտաւայից գրում են «Р. В.» լրագրին, որ այնտեղ յուլիսի 16-ին լոյս 17-ի գիշերը ոստիկանութիւնը շրջապատել է նշանաւոր գրող Վ. Գ. Կորոլենկոյի բնակարանը և խուզարկութիւն կատարել։ Վ. Գ. Կորոլենկոն բացակայ էր իր բնակարանից (ընտանիքով ապրում էր գիւղում), իսկ նրա բնակարանում ժամանակաւոր ապրողների հարցին խուզարկութիւն կատարող ոստիկանը պատասխանել է, որ որոնում են մի ինչ-որ «անձի»։ «Ոչ մի պարսաւելի բան», ի թիւս որոնց և որոնվող անձը, չը գտնվեց։ Դա արդէն առաջին այցելութիւնը չէ, որին արժանանում է Վ. Գ. Կորոլենկոյի բնակարանը, և իւրաքանչիւր եռանդուն խուզարկութիւն վերջանում է նոյնանման յաջողութեամբ։

—

Յուլիսի 18-ին Պետերբուրգից իր կալուածն է վերադարձել, Զենկովսկի գաւառը, Պետական Դումայի նախկին անդամ Ի. Պրիսեցկին։ Յաջորդ օրը ևեթ Զենկովից նրա մօտ է գնում խպրավիկը և նրա օգնականը, իրանց սովորական ուղեկիցներով, Պոլտաւայի նահանգական ժանդարմների վարչութեան կարգադրութեամբ խուզարկութիւն կատարելու նպատակով։ Այցելությունը Պրիսեցկուն տանը չէն գտնում։ «Ոչ մի պախարակելի» բան նրա մօտ ևս չեն գտնում, բայց և այնպէս ոստիկանութիւնը հարկաւոր է համարում գիւղացիների ուղարկած նամակները Պրիսեցկուն, իբրև պատգամաւորի, վերցնել։ Այդ նամակներից մի քանիսը արդէն ժամանակին տպագրվել են մամուլի մէջ։ Այժմ, թերևս, նրանց գրողների «վստահելութեան» մասին իբրև նիւթ կարողանայ ծառայել, որովհետև, ինչպէս երևում է ոստիկանական և ժանդարմերիական իշխանութեան համար Պետական Դումայի հետ պատահած ամբողջ արկածը ոչ այլ ինչ է, բայց եթէ ամենաաւագ միջոց բնակիչների «վստահելութեան մասին քննութիւն կատարելու համար»։

—

Անկարգութիւններին մասնակցելու համար կարմիր գվարդիայի կալանաւորված անդամների թիւը արդէն 100-ի է հասնում։ Կազակները այս ու այն կողմ ընկած խնամքով խուզարկում են Հելսինգֆորսի շրջակայքը։ Նրանք կալանաւորել են մի քանի կարմիր գվարդիացիներ և գտել են մի քանի սպանվածներ։ Բոլոր կալանաւորներին բանտարկել են նահանգական բանտում։

—

«Петер. Газ.» լրագիրը հաղորդում է, որ Կրոնշտադտ ապստամբութեանը մասնակցող ոչ զինուորականների թւում, պաշտօնապէս արդէն հաստատվել է, որ եղել է Պետական Դումայի նախկին անդամ Օնկլիսին։ Ուրիշների մասին ստոյգ տեղեկութիւններ չը կան։ Ցայտնի է միայն, որ մասնակցողների մէջ եղել է Պետական Դումայի նախկին անդամներից մէկը նոյնպէս, որին յաջողվել է փախչել։ «Կոնստանդին» մարդասպան կալանաւորվածների թւում 25 հոգի զինուորականներ չեն։ Նրանց մեծ մասը ինտելիգենտ անձնաւորութիւններ են։ Սվեաբորգում կալանաւորվածներից 85 հոգին, «Пет. Газ.» լրագրի ասելով, զինուորականներ չեն։ շատերը նրանցից ինտելիգենտներ են։ կան ինժիներներ, պրոֆեսորներ, 17 հոգի Պետերբուրգի բնակիչներ են, իսկ միւսները՝ տեղացիներ։

—

Թէ զինուորական գրութեան մէջ գրված Վարշավայի ապստամբութիւնը ինչ տեսակ կամայականութիւնների հետ է գործ ունենում, այդ կարելի է տեսնել հետևեալ չափազանց բնորոշ դէպքից, որը մենք քաղում ենք «Kurjera Warsz» լրագրից։ Յուլիսի 22-ին, երեկոյեան ժամի 9-ին, Վօլսկի ոստիկանամասն է կանչվում բժշկական ապրագ օգնութեան կոչը արհեստաւոր Յրիգերին օգնութիւն ցոյց տալու համար, որի ուսը սուինի հարուածով խոցված էր, մտնելով մի կողմից միւսից դուրս էր եկել։ Վէրքը շատ ծանր էր և, օգնութիւնը եթէ ուշնար կարող էր զրկել նրան ձեռքի աշխատանքից։ Ինչպէս պարզվեց, Յրիգերը դուրս է գալիս իր տնից և գնում է մօտակայ խանութը տօնի համար փողակալ առնելու։ Ճանապարհին նրան հանդիպում են պահակները, որոնք տեսնում են Յրիգերի բաճկոնակի վրա հագցրած կարմիր մեխակը, ընդունում այդ բանը ծայրայեղ համոզմունքների նշանաբան, և զինուորներից մէկը սուինով ծակում Յրիգերի ուսը։ Դրանից յետոյ նրան արիւն լուայ տարան Վօլսկի ոստիկանամասի դիւանատունը, որ մի քանի վերստ հեռու է դէպքի վայրից, և այնտեղ միայն բժիշկը կապեց նրա վէրքը։ Այդպիսի դէպքերը Վարշավայում այնքան են սովորական դարձել, որ Kurjer-ը այդ լուրը տպում է փոքր տառերով։

—

Ինչպէս հաղորդում է «Вѣкъ»-ը, տեղական ինքնավարութեան նախագիծը արդէն մշակված է Ներքին գործերի մինիստրութեան մէջ։ Նա հիմնված է գաւառի հաւասարութեան սկզբունքի վրա։ Գիւղացիական ինքնավարութիւնները մտադրութիւն կայ վերացնել։ Կազմվում են առանձին առանձին, նոյնպէս ոչ դասային, հողային համայնքներ, որոնք պէտք է վերահասու լինեն իւրաքանչիւր համայնքի միայն հողային տնտեսական գործերին, իսկ յիշեալ շրջանի մեացեալ բոլոր տնտեսական հարցերը կը լուծէ շրջանային կամ վոլոստնոյ զեմստվոն։ Այդ զեմստվային մասը ամբողջութիւնը շարկապված կը լինի գաւառական զեմստվոյի հետ։ Իսկ այն տեղերում, ուր գաւառական զեմստվոն աւելորդ կը համարվի, շրջանային զեմստվոն անմիջական վերջով յարաբերութիւն կունենայ նահանգական զեմստվոյ հետ։

—

Ներքին գործերի մինիստրի խիստ պահանջմամբ Տերիոքի կայարանի ժանդարմ Զապոյլսկին, որի վրա կասկած կայ, որ Պետական Դումայի նախկին անդամ Մ. Ե. Հերցենշտէյնի սպանութեան մէջ մասնակից է, ազատված է բանտից։ Ոստիկանական դեպարտամենտի նախկին դիրեկտոր Զուբովսկին, ֆինլանդական ադմինիստրացիայի քննութիւնից զատ, եռանդուն քննութիւն է սկսել։ Մինչև այժմ հարցաքննութեան են ենթարկվել Պետական Դումայի նախկին անդամներից շատերը։ («Р. В.»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի։ Օգոստոսի 1-ից Աւրբայջան Թագաժառանգը հաշվելու է Դանեայի թագաւորի հիւսիսային 45-րդ գրագունեան գնդի ցուցակում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 31 յուլիսի։ Գորդիևվկան կրակի մէջ է։ Հրդեհը ցրված է ընդարձակ տարածութեան վրա, բայց և այնպէս տօնավաճառին վտանգ չէ սպառնում։

ՊԱՐԻԶ, 1 օգոստոսի։ Միացեալ նահանգների նախագահի թեկնածու Բրայանը «Լիբերատէ»-ի թղթակցին ասել է, որ ինքը չէ ցաւել Դումայի արձակմամբ, քանի որ միաժամանակ խոստացված է նոր Դումա գումարել։ Բրայանը հաւատացած է, որ նոր Դումայի կազմը նախկինը կը մնայ, բայց Դումայի և կառավարութեան միջև վերջապէս հատաձայնութիւն կը կայանայ։ Նրանք կաշխատեն միասին և նրանց միահամուռ աշխատանքը կը խորտակէ Ռուսաստանի համար կորստաբեր ագիտացիան։

ՍՕՖԻԱ, 1 օգոստոսի։ Թիւրքական սահմանի վրա մի նոր միջնադէպ է տեղի ունեցել։ Թիւրքական մի պահակախումբ անցել է բոլգարական հողը։ Բոլգարական զինուորները կրակ են բացել։ երկու թուրք սպանված է։ Լուրերին նայած, թուրքերը գրաւել են բոլգարական հսկիչ պահակատեղը։ — Անխելօյը ամբողջովին այրվեց։ Սպանվածների և վիրաւորվածների թիւը դեռ ևս պարզված չէ։ Շրջակայքի յոյն ազգաբնակութիւնը փախչում է դէպի սարերը։ Բուրգսկի վիճակում յոյների մէջ մեծ յուզմունք է տիրում։

ՄՕՍԿՎԱ, 1 օգոստոսի։ Գրիգորիևի առաղգագործի արհեստանոցում խուզարկութեան ժամանակ գտնվել է մի փայտէ թնդանօթ, որը, ըստ երևոյթին, ծառայելիս է եղել յեղափոխականների վարժութեան համար։ — Հոկտ. 17-ի գաշնակցութեան կենտրոնական կոմիտէտը գաւառական կոմիտէներին ուղարկում է իր կազմած նոր ծրագիրը խաղաղ վերածնութեան կուսակցութեան կոչի հետ միասին և առաջարկում է վճռել խաղաղ վերածնութեան կուսակցութեան մէջ մտնելու հարցը։ Կենտրոնական կոմիտէն արդէն քննել է իր նոր ծրագիրը, որի ժամանակ հոետորները կարծիք են յայտնել, որ պէտք է միանալ խաղաղ վերածնութեան կուսակցութեան։ Սակայն վիճաբանութիւնները մի վերջնական կէտի չեն յանգել։ Շուտով կը կայանայ նոր խորհրդակցութիւն։

ԿՕՍՏՐՕՄԱ, 1 օգոստոսի։ Այրվեց Մաղիխենի մեծ գործարանը։

ԻՒԻԲԼԻՆ, 1 օգ.։ Երէկ Զեմբրեակի կոչված անտառում, քաղաքից 7 վերստ հեռաւորութեան վրա, տեղի է ունեցել մի քանի գործարանների բանւորների միացեալ միտինգը։ Մասնակցել են եկւոր ագիտատորները։ Անտառը շրջապատվել է զօրքերով։ Ձերբակալված են 200 հոգի։

2 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Բարձրագոյն անուանական ուկազով Եկատերինոսլավի նահանգի Բախմուտի, Մարկուպոլի, Սլաւյանսկի գաւառները կազմում են մի գեներալ-նահանգապետութիւն, ինչպէս և Տագանրոգ քաղաքը, Տագանրոգի վիճակը և Դոնեան զօրաց շրջանը։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը կառավարելու է հարաւային գործարանային ամբողջ բոյսը։

ՀԱՐԿԻՆՏ, 1 օգոստոսի։ Կէս գիշերվայ մօտ ստորերկրեայ ուժեղ հարվածներ զգացվեցին։

ՎԱՐՇԱՎԱ, 1 օգ.։ Երէկ, Վարշավա կայարանում 5 գնդակով սպանվել է դէպոի կառավարչի օգնական Դորոֆիէվը։

ՄԱՐԻՈՊՈԼ, 1 օգոստոսի։ Գիւղացիական շարժումը և ագրարային անկարգութիւնները մեղմացան։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 1 օգոստոսի։ Էլեքտրաքարշէի գործաթող բանւորների և ընկերութեան միջև լիակատար համաձայնութիւն կայացաւ։ Գործադուլը վերջացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Այսօր, արտաքին գործերի մինիստրութեան մէջ կայացաւ առաւ և եապոնցի լիազօրների խորհրդակցութիւնը։ քննվում էր Ռուսաստանի և Եապոնիայի միջև ձկնորսութեան կօնվենցիա կապելու հարցը։

Այն լուրերը, որ իբր ապագայ Դումայի անդամների թիւը պէտք է աւելի լինի նախկինից, հիմքից բոլորովին զուրկ են։ Տաւրիական պալատի վերանորոգութիւնը տեղի է ունենում սոսկ հասարակութեան և մամուլի ներկայացուցիչների տեղերը ընդլայնելու նպատակով։

Մամուլում սպրդած լուրը՝ Պետական Դումայի նախկին անդամ Օնկլիսին կախելու մասին սխալ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Դէպի Կովկաս գաղթականներ ուղարկելը այժմ դադարեցված է, ի նկատի ունենալով, որ այնտեղ տեղի են ունենում խռովութիւններ, իսկ միւս կողմից նպատակ է ազատ հողաբաժինների բացակայութիւն։ Այժմ գաղթականները զլխաւորապէս զիմում են Պրեմուրիան, Ուսսուրսկի նահանգները, Տօբոլսկի, Տոմսկի գաւառները և այլն։ Այդ նահանգներում գաղթողներից իւրաքանչիւրին տրվում է 15 դես. հող. իսկ Պերմսկի նահանգում՝ 80 դես.։

ՄՕՍԿՎԱ, 1 օգոստոսի։ Գանված ռումբերի կաղապարների պահեստի մէջ եղել են նաև 2 պուդ դինամիտ և տարճանակի 3000 փամփուշտ։ Բաղաքապետի հրամանով գիշերս ոստիկանութիւնը փակել է բոլոր իշխանատեղիները, որոնք տեղափոխվելու են քաղաքի ծայրերը։

ՐԻՎԷԼ։ Գործադուլը թուլանում է։

ՀՌՈՄ, 1 օգ. հրատարակված է պապի գրութիւնը՝ ուղղված Ֆրանսիայի եպիսկոպոսին, որի մէջ պապը արգելում կրօնական ասոցիացիաներ կազմել և ցանկութիւն է յայտնում, որ փորձի համար կանոնական ընտրութեամբ ընկերութիւններից մի քանիսը միանան։ Գրութեան մէջ հերքված է այն լուրը, որ իբր պապը Ֆրանսիային վերաբերում է թշնամաբար, քան ուրիշ պետութիւնների։ Իսկ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի համար բոլոր պատասխանատուութիւնը ընկնում է նրանց վրա, որոնք դէպի կաթոլիկութիւնը ունեցած ատելութիւնից անցան ծայրայեղ միջոցներին։

ՍԱՐԱՏՕՎ, 1 օգոստոսի։ Վոլգայի ափին, անտառում, ձերբակալված են երկաթուղային կազմակերպութեան համադումարին մասնակցողները։ Գրաւված են արձանագրութիւններ և հաշիւներ։ 2 պատգամաւոր անյայտացել են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Թ. ՆԱԽՍԻՍԱՐԳԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽՍՈՒՐԴԻԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկրատեռ. հ.
Կ. Մ. ՀԱԽՕՎԱՆ 9½—10 ½ տէրք ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽՏԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՅԵՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Ն ԳԶԵԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿՈՐՍԱԳԻՏԵՆՑ—1—2½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՀՈՒՆ-ԲԱՅԻՆԵՆ Ա. Ի. ՇԱՂԵՐԵՆՑԻՆՆ—1½-2 ժ. մանկ[illegible]
ԵՐԱՆԵՐԸ
Ռ. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ —5—7 ժ. ներքին և երեխայոց հիվանդներ։
№ 4 ԱՌՈՒՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. դեղատոմսերը ձրի։ Հաստատարար (կանոնավոր) և օգնությունի համար առանձին։
Հիվանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նախսիսարգեան

Բ Ա Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կազանսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազանսկի փողոցից № 2.
(ա. օ.) 202—300

Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակային ատեանի մէջ նշանակված է աճուրդ օգոստոսի 4-ին, առանց կրկնաճուրդի, կապալով տալու Էջմիածնապատկան Օրթաճայի այգին։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պիտի ներկայացնեն պահանջեալ գրաւականը։
Կառավարիչ կալուածների՝ Եփրեմ Վարդ.։
(չ. հ. ուր.) 2—3

Կարսի շրջանի Բէկզլի-Ահմեդ գիւղի ծխականների դպրոցի համար հարկաւոր են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. թեմական դպրոց աւարտած, որոնք աւանդելու են բոլոր առարկաները ա. և բ. բաժանմունքներում. երգեցողութեան ուսուցիչը պէտք է երգէ հեկեղեցում (տօն օրերին) իր կազմած միաձայն խմբով. ռոճիկ տարեկան 400 ր. ամին մէկին, նոյնպէս և բնակարան և վառելիք։ Դիմել՝ Կարսъ, Мовсесу Согомонянцу։ (չ.հ.հ.) 3—3

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆոքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր պլոմներ
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Ամմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ։
Ալբոմի հատը 1 ռուբ. 20 կոպ.։
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժամային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ։ Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են։
Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին։

Բ Ա Ժ Ի Շ Կ
Գ. Ն. Մաղաքեանը
վերադարձաւ և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ 2—3

ԵԴԵՍԻԱՅԻ հայոց եկեղեցական-ծխական միդասեան ազգական դպրոցի համար հարկաւոր են երկու ուսուցիչ. իւրաքանչիւրը շաբաթական պէտք է ունենայ 27 դաս. ուսուցիչներից մէկը պարապելու է ռուսաց լեզուից և միւս երկրորդական առարկաներից։ Տարեկան ռոճիկ ճաշապարհածախսով իւրաքանչիւրին 360 ր., բնակարան, վառելիք և ծառայ։ Դիմել այս հասցէով. Черезъ гор. Моздокъ въ М. Эдисію, попечительству армянскаго училища.
3—3

„ՆՈՄԵՐՈՍ ՅԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻԻՐԱՆՈՅՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս՝ Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
Ալէքսանդր Յարութիւնով
(հ. կ. հ.) 43—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

(Ամառային շինութիւն)

Հինգշաբթի, օգոստոսի 3-ին, 1906 թ.
Մի խումբ դերասաններ, ղեկավարութեամբ
Փ. Ս. ՍՕԿՈԼՈՎՍԿՈՒ
կը նեցկայացնեն ռուսերէն լեզուով
I
ԴՌՆՓԱԿ
Վօդեվիլ 1 գործող. Շեվմեաչովի
II
ԿԵՂԾ ԻՐԱՒԱՆՅՈՒՄ
Վօդեվիլ 1 գործ. Ս. Տուրբինի
Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ի երեկոյեան ժամը 9½-ին Երևանեան հրապարակում գտել եմ մի ոսկէ ժամացոյց իր շղթայով։ Դիմել Մինկվիցեվսկայա փողոց, № 21. առաւօտները ժամը 8-ից մինչև 9½-ը։
Վարդան Միրաքանցին
(հ. ու.) 1—2

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՎՈՒՄ
Գայիանեան օրիորդաց դպրոցի ներքևի յարկը (Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, տուն Տէր-Ասատուրովի № 13) 3—3 կամ միասին 6 Սենեկներ և այլ յարմարութիւններով։ Դիմել դռնապան Յարութիւնին։

Մեկ մօտ վաճառվում է
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ
(Երգարան գիրքը) գինը 60 կ.։
Փառակաղմ 1 ր. 10 կ.։
Դիմել՝ Баку, О. Газанчяну, Бюро газетъ, Молоканская, противъ гост. «Кавказъ».
3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հեռատեսել գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՅՈԼԸԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷՋԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
—
Եւ թարգմանած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ։
Ցանկացողները կարող են դիմել նաև. Тифлисъ, Орбеліановск. ул. № 24 Левону Меликъ-Адамянъ.
(չ. 1) (հ) 8—20

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Գ. Ալթունեանի. ծխական դպրոցների համար.
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
Դիմել՝ Էջմիածին ճեսարանի քարտուղար, պ. Քոչարեանին և Ալէքսանդրօպոլ հեղինակին։
8—10

տաւրօպոլի հայոց միդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ,
որը շաբաթական ունենալու է նաև հայոց լեզուի և թուաբանութեան 24 դաս։ Ռոճիկ 600 ր., բնակարան (երկու սենեակ), վառելիք, լուսաւորութիւն և ճանապարհածախս։
Դիմել՝ Ставрополь губ. священнику Сааку Теръ-Ованнесьянцъ.
3—3

Սամարղանդի հայոց երկսեռ ծխական դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ (ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ) շաբաթական 24—26 դասով։ Ռոճիկ 720 ռուբլի, բնակարան և վառելիք. և Մի ՎԱՐԺՈՒՀԻ (գիմնազիաւարտ) շաբաթական 20—22 դասով. ռոճիկ միայն 500 ռուբլի։ Հասցէն՝ Самаркандъ, Николаевская ул. № 8. Попечительству Армянск. училища.
(չ. հ. հ.) 3—4

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Դուրգէնովի № 7. պօղեղ նօսար Մղերբովի։ (Ե.հ.չ.) 34—100

Մօտ օրերումս կուզարկվի տպագրական գործերի Թիֆլիսի կոմիտէին և ապա, ոչ ուշ օգոստոսի 10—15-ից, լոյս կը տեսնի (միայն 480 օրինակով)
ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ
ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ
(Ո՞վ է մեղաւորը)
Էպիզոդներ հինգ արար. եւ ապօթէօզով
1905 թ. հայ-թուրքական ընդհարումներից
Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Շէյթանի» գործերից. IV—Մարմնացած թշնամութիւն. (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական։
Ապօթէօզ։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Միանգամ 10-ից աւելի կանխիկ վճարով գնողներին—20%, 30-ից—25% և 50-ից—35% զեղչում է լինելու։
Դիմել միմիայն հեղինակին այսպէս. Эмину Теръ-Григорянцу.
(հ. կ.) 3—15

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՋԱՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I պրակ. գինն է 8 կոպ.
Դիմել հայ գրավաճառներին։
7—10

Վարդանի եւ Մարտիրոս Շուռի
ԳԻՇԵՐՕԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
օգոստոսի 20-ից ընդունվում են երկու սեռի աշակերտներ հանրամատչելի գներով։
Պայմանների մասին դիմել՝ Анапа, училищ. пансіонъ В. М. Шводъ.
3—4

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօստային	Մարգատար.	Արագ.	Ադրանգ.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը	11 ժ. 03 ր. ցերը	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. գիշ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 38 ր. ցերը.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցերը.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցերը.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Թիֆլիսի Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը այսու յայտարարում է, որ՝
ԳԱՑԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ
վերաբացվում է առաջիկայ սեպտեմբերի 1-ից երկու նախապատրաստական և առաջին հիմնական դասարաններով։ (Դալ տարիները ատիճանաբար կը բացվեն յաջորդ դասարանները՝ միշնակարգ դպրոցի ծրագրով։
Դպրոցը և նրա գրասենեակը գտնվում են Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, տուն Տէր-Ասատուրովի № 13 (улица Паскевича, домъ Теръ-Асатуровы, Сололаки).
ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԿԱԶՄՎԱԾ Է
Աշակերտուհիների համար խնդիրները ընդունվում են ներկայ օգոստոսի 15-ից մինչև 24-ը. իսկ 25-ին առաւօտեան ժամը 9-ին այն ամենքը, որոնք մինչև այդ օրը խնդիրք ներկայացրած կը լինեն, այլ և նախկին աշակերտուհիները, որոնց վկայականները մնում են դպրոցում, հրաւիրվում են ներկայանալու դպրոցը՝ քննութեան ենթարկվելու համար։
Ուսման վճարը որոշված է 20 ռուբլի՝ երկու նախապատրաստականների համար և 30 ր.՝ առաջին հիմնական դասարանի համար։ Վճարի կէսը տրվում է օգոստոսի 25-ից մինչև 30-ը։ Զբաղավարժների թիւը լինելու է բոլոր աշակերտուհիների թւի մի տասներորդը։
(օգ. 3, 6, 12, 20, 25, 30) 1—7

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱԶԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Գ. ՇԵՄԲԵՐՆԻ
ԳԻՆՆ Է 75 ԿՈՊԵԿ
Հեղինակից գումարով (առնուազն 20 օրինակ) գնողների համար 60 կոպէկ։ Հեղինակի հասցէն՝ Эчміадзинъ, Академія, Мануку Абегянъ։ Կարելի է դիմել նաև Թիֆլիսի գրավաճառներին և Արարատ Աբեղեանին, «Ալիք» խմբագրութիւն։
(ու. կ. հ. կ. չ.) 4—5

Առեւտրի եւ արդիւնաբերութեան սինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. տուն № 24/4.)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքը աւարտողներին տրվում են ատտեստատներ։ Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, խառնական բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանոնագրութիւ